№ 219 ՈՒՐԲԱԹ 4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1913 ՈՒՐԲԱԹ 4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 219

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲ.

Հոկտ. 1-ից մինչեւ Յունվր. 1-ը—85 կ.: Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք է վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Կիևում՝ Большая 38, Պարիզում՝ Площадь Биржи 8

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիվ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. Խորհուրդը
հրաւիրում է պ. պ. անդամներին Ընկերութեան
ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
որ կայանալու է կիրակի, հոկտեմբերի 6-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Ընկերութեան դահլիճում (Արաս-Աբաղեան հրապարակ սեփ. տուն № 7)։
Զբաղմունքի առարկաներն են.
1) Մի քանի ճիւղերի նախահաշիւների քննութիւնը և հաստատումը.
2) Առևտրական բանկի ակցիաներ գնելու մասին.
3) Զեկուցումն հանգուցեալ Նատալիա Տէր-Ղազարեանի կտակի մասին.
4) Զեկուցումն Պեատիգորսկի ուսուցչական սանատորիային օգնելու հարցի մասին.
5) Ընկերութեան ընդհանուր լիազօր ունենալու հարցը.
6) Ընթացիկ հարցեր.
ատ. (կ.) 837. 2—1

Հայոց Պատմական եւ Հնագիտական Ընկ. հիմնադիրների ժողովը յայտնում է Ընկ. անդամներին, որ հոկտեմբերի 5-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Յովնանեան օրիորդաց ուսումնարանի դահլիճում նշանակված է
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
պաշտօնատար անձինք ընտրելու համար։
ատ. 838. 1—1

1914 թ. յունվարի 1-ից նոր բացվելիք
Կարսի 2-դ Փոխադարձ Վարկի Ընկ. Խորհուրդը
ՀՐԱՒԻՐՈՒՄ Է
ՓՈՐՁԱՌՈՒ ԿԱՌԱՎԱՐԻՉ և ՀՄՈՒՏ ՀԱՇՒԱՊԱՀ
Խնդրվում է կցել անհրաժեշտ մանրամասն տեղեկութիւններ իրանց նախընթաց պաշտօնավարութեան և կրթութեան ցենզի մասին։
Առաջարկութիւններն ուղարկել Խորհրդի անունով ներկայ հոկտեմբերի 20-ից ոչ ուշ։
ատ. (ա. օ.) 828. 5—4

ՇՈՒՇԻ—ԵՒԼԱԽ—ՆՈՒԽԻ—ԳՈՐԻՍ
ԼԵՒՈՆ ՎԱՐԱԶԵԱՆԻ ղեկավարութեամբ կազմված կօմիսիօնօ-առևտ. ընկերութիւնը
յայտնում է վաճառականներին, մասնաւոր անձանց, կուլտուրական, արդիւնաբերական և առևտրական հաստատութիւններին, որ այդ ընկերութիւնը սեպտեմբերի 15-ից, ի միջի այլ ձեռնարկութիւնների, բաց է արել Շուշում և Եւլախում կօմիսիօներական գրասենեակներ։ Բոլոր պատուէրները կատարվելու են շուտափոյթ, ճշգութեամբ և չափաւոր վարձատրութեամբ կանխիկ։ Դիմել Շուշում և Եւլախում նամակով այսպիսի հասցէով. Въ комиссіонерство Л. Варазова, իսկ հեռագրով՝ Варазову.
(օ.մ.) ատ. 776. 15—10

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Վերադառնալով արտասահմանից վերսկսում է ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, թոքախտի և սրտի. բժշկութիւն նաև խառն տուբերկուլիններով, արհեստական պնեվմօտօրակսով։ Թոքերի և սրտի քննութիւնը, լուսաւորված ռենտգենեան ճառագայթներով։ Ամեն օր՝ 9—12 ժամ և 5—7 ժ. երեկոյեան. Бебутовская 23, тел. 7—92.
(ա.օ.) ատ. 92 100—82

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԷՖՕՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

«Մշակի» վերջին երեք համարներում մենք տպեցինք մի շատ կարևոր դօկումենտ հայկական րէֆօրմների մասին։ Դա—Թիւրքիայի հայաբնակ 6 նահանգների մէջ մտցնվելի րէֆօրմների ռուսական նախագիծն է, որ յայտնի է «Մանդելշտամի նախագիծ անունով»։

Պէտք է խոստովանել, որ այդ նախագծի խմբագրութեան և կազման մէջ պ. Մանդելշտամը ցոյց է տուել մեծ հմտութիւն և առարկայի լուրջ ու խորին ուսումնասիրութիւն։ Միևնոյն ժամանակ նա աշխատել է խնայել Թիւրք կառավարութեան դիւրագգացութիւնը, չը մտցնելով նախագծի մէջ այնպիսի կէտեր, որոնք կարող էին աւտօնօմիայի մասին երկիւղներ առաջացնել։

Ամենակենտրոնականը և ամենակարևոր խնդիրը՝ րէֆօրմների գործադրութեան եւրօպական կօնտրօլի խնդիրը նա ձեւակերպել է վերջին 22-րդ յօդուածում շատ տարտամ կերպով, ասելով թէ «մեծ պետութիւնները ապահովելու են բոլոր այս տրամադրութիւնների կատարումը»։

Թէ ինչ տեսակ են ապահովելու մեծ պետութիւնները րէֆօրմների գործադրութիւնը, այդ թողնված է, անշուշտ, առանձին համաձայնութեան, որ պէտք է կայացնեն իրար մէջ մեծ պետութիւնները։

Եւ գլխաւոր ընդհարման վէմը հէնց այստեղ է։ Կօնտրօլի խնդիրն է, որի մասին մեծ պետութիւնները չեն կարողանում մինչև այսօր որոշ համաձայնութեան յանգել և որից ճարպիկ կերպով օգտվում է Թիւրքիան 33 տարիներից ի վեր։

Անշուշտ, այդ կօնտրօլը երկու տեսակ կարող է լինել. կամ հաւաքական, կամ միանձնական։ Մեծ պետութիւնները, բաժանված երկու խմբակցութիւնների, պէտք է հաւաքօրէն կօնտրօլ ունենան կամ բոլոր 6-ը միատեղ, կամ յանձնելով լիազօրութիւն մի խմբակցութեան (երեքպետեան) և կամ պէտք է կօնտրօլի ամբողջ գործը յանձնեն մի պետութեան, կարգելով նրան հաւատարմատար-լիազօր բոլոր 6 պետութիւնների։ Արդ, բոլոր 6 պետութիւնների մէջ, Ռուսաստանն է միայն, որ իբրև անմիջական դրացի Թիւրքիայի, հնարաւորութիւն ունի ստանձնել կօնտրօլի պաշտօնը։ Միւս պետութիւնները չունեն այդ հնարաւորութիւնը, հեռաւորութեան պատճառով։

Կօնտրօլի այդ կարևորագոյն խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է, որ, համաձայնութիւն կայանայ միայն Գերմանիայի և Ռուսաստանի միջև, որովհետև այդ երկուսի համաձայնութիւնը կը նշանակէ երկու երեքպետեան խմբակցութիւնների համաձայնութիւնը։ Գերմանիան համաձայն լինելով, համաձայն են լինելու նաև Աւստրիան և Իտալիան, իսկ Ռուսաստանը համաձայն լինելով, համաձայն են լինելու նաև Ֆրանսիան և Անգլիան։

Եւ եթէ ճիշդ է վերջերս հաղորդված այն լուրը, թէ համաձայնութիւն այդ մասին կայացել է արդէն Գերմանիայի և Ռուսաստանի միջև և ընդունվել է Մանդելշտամի նախագիծը, պէտք է ընդունել, որ ուրեմն շուտով հայկական հարցը առաջ կը քշվի դիպլօմատիայի կողմից։

Մեր այլ դիտողութիւնները նախագծի մասին այլ անգամ կանենք։

Հ. Առաքելեան

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետ. Հեռագ. Գործ.)

2 հոկտեմբերի

Սօֆիա.— Լրագիրները հաղորդում են, որ Թրակիայում Թիւրքերը արտաքսում են բօլգարներին կացարաններից, որպէս զի տեղ բանան գաղթական-մահմեդականների համար։ 1000 բօլգար փախել են լեռները և մատնված են սովամահութեան վտանգին

Կ. Պոլիս.— Ոստիկանութիւնը կալանաւորեց ֆրանսիական պօստի յանձնակատար նամակատարին։ Լուրերի համաձայն, մտադրութիւն է եղել գրաւել այն թղթերը, որ իբր ուղարկել էր Պարիզից Շէվքէթ-փաշայի սպանողներից մէկը։

Շէրիֆ-փաշան արտակարգ միջոցներ է ձեռք առնում օպպօզիցիօն շարժման դէմ։

Յունաստանի դէմ Բ. Դուռը ձեռք է առնում ընդարձակ ռազմական միջոցներ, ամրացնում է Դարդանէլն ու ասիական ծովափը, մանաւանդ Զմիւռնիան։

Վիէննա.—«Զիւդ-Սլավիշէ-Կոր.»-ին հաղորդում են Սալօնիկից, որ յոյն և թիւրք զօրքերի միջև Կսանտիի մօտերքը տեղի է ունեցել արիւնահեղ ընդհարում։ Յոյները յետ են մղել թիւրքաց զօրամասը և գրաւել են Կօյունքեօյը։

Աթէնք.—Կայացաւ թիւրք պատգամաւորների առաջին նիստը արտաքին գործերի մինիստրի և յոյն պատգամաւորների հետ։

Աթէնք.—Թագաւորն այցելեց Դէմիր-Հիսարը և Սերէսը և կատարեց զօրադիտում։

Բէլգրադ.—Սկուպշչինայի նախագահ նորից ընտրվեց 79 ձայնով ընդդէմ 43-ի Անդրա Նիկօլիչը, փոխ-նախագահներ՝ Դուկչեվիկ և Բրաշինակ, երեքն էլ հին արմատականներ։

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 հոկտեմբերի

Հռոմ. — Բէլգրադից տեղեկացնում են, որ իտալական կառավարութիւնը բարեկամական քայլեր է արել սերբիական կառավարութեան առաջ, մատնանշելով թէ անհրաժեշտ է յարգել Ալբանիայի սահմանները, որոնք որոշված են լօնդօնեան վեհաժողովից, և թոյլ չը տալ՝ հէնց ի շահ Սերբիայի՝ խստութիւններ գործ դնել ալբանների դէմ։ Իտալիան բարեկամօրէն յոյս է տածում, թէ Սերբիան չի ստիպի Իտալիային ձեռք առնել աւելի եռանդուն պաշտօնական քայլեր, որովհետև Իտալիան և Աւստրո-Ունգարիան չեն կարող թոյլ տալ խախտելու լօնդօնեան որոշումները և անմարդասէր վերաբերմունք ցոյց տալու դէպի ալբանները։

Վիէննա.—Աւստրօ-ունգարական կառավարութիւնը յանձնարարեց Բէլգրադի իր հաւատարմատարին սերբ կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել, թէ անհրաժեշտ է յարգել Լօնդօնում որոշված ալբանական սահմանները։

Յանինա.—Վալօնից հաղորդում են, որ ժամ. կառավարութիւնը Սկապարի է ուղարկել պաշտօնեայ Բակը Էֆֆէնդիին կամաւորների գնդեր կազմակերպելու համար, որոնք հանդէս են գալու ընդդէմ Էսադ-փաշայի։ Զինուորական ոյժերը կենտրօնացած են Լիւսնում,

Վիէննա.—«Կոր. Բիւրօյին» հեռագրում են Վալօնից, որ այնտեղ է հասել Էսադ-փաշայի հաւատարմատարը՝ Էսադ-փաշային ալբանական ժամ. կառավարութեան հետ հաշտեցնելու նպատակով։ Որովհետև կառավարութիւնը հրաժարվեց հաշտվել, Էսադ-փաշան յայտնեց, թէ դուրս է գալիս կաբինետից, նաև տեղեկացրեց կառավարութեան, որ Դուրացցօյում նա կազմակերպել է կենտրօնական Ալբանիայի նոր կառավարութիւն, իշխանութիւնը գտնվում է սենատի ձեռքում, որի նախագահը ինքը Էսադ-փաշան է։ Էսադ-փաշայի վարմունքը դատապարտվում է ժամ. կառավարութեան շրջաններում, թէև ոչ մի երկիւղ չէ յարուցանում։ Էսադ-փաշան իր քայլի մասին իրազեկ է արել նաև միջազգային վերահսկիչ յանձնաժողովին։ Վալօն եկաւ այդ մասնաժողովի ռուսական պատգամաւոր Պետրեաեվը։

Կորիցա.—Տեղս եկաւ մայոր Դօուտիուայլին, որ իբրև անգլիական պատգամաւոր մասնակցելու է Հարաւային Ալբանիայի սահմանները որոշող միջազգային մասնաժողովի մէջ։ Անգլիական պատգամաւորը նախագահելու է մասնաժողովում։ Սպասվում են մասնաժողովի մնացած անդամները։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 հոկտեմբերի

Լիվադիա.— Պաշտօնական։ Այսօր Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրին բախտ ունեցան ներկայանալ Սեվաստօպօլից եկած օդագնացութեան դպրոցի դասընթացքն աւարտած 18 օֆիցերները։

Դրեզդէն.—Ժամը 5 և 17 րօպէին ժամանեց Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրօվիչը, որին կայարանում դիմաւորեցին Թագաւորը, պրինց Հէնրիխ-Յովհանը, Սակսօնիայի բարձրաստիճան պաշտօնեաներ և ռուսական միսսիայի անդամները։ Կայարանից Թագաւորը և մեծ իշխանը մեկնեցին Վինէրպլաց, ուր դրված էր պատուաւոր պահակախումբ։ Երեկոյեան պալատում կայացաւ պաշտօնական հացկերոյթ։ Թագաւորը խմեց Թագաւոր Կայսրի և ամբողջ Թագաւորական Տան կենացը և կրկին շնորհակալութիւն յայտնեց Կայսրին Կօպօրի գնդի շէֆ նշանակելու համար։ Ճաշից յետոյ տեղի ունեցաւ պաշտօնական օպերային ներկայացում։ Թագաւորը Մեծ Իշխանին շնորհեց շքանշան։

Ռուսաց դեսպան բարօն Վօլֆը ի պատիւ Մեծ Իշխանի նախաճաշ տուեց միսսիայում։

Լայպցիգ.—«Ժողովուրդների կռիւ» յուշարձանի բացման առիթով տեղս ժամանեց Դրեզդէնից Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրօվիչը շքախմբի և ռուսաց դեսպանի ուղեկցութեամբ։ Մեծ Իշխանը իջևանեց թագաւորական պալատում։

Յերեկով Բեռլինից եկան դեսպան Սվերբէեվը՝ դեսպանատան պաշտօնեաների հետ, Բեռլինի և Դրեզդէնի ուղղափառ հոգևորականութիւնը և այլք։ Մոսկվայից եկել է սինօդական գրասենեակի դատախազ Ստեպանօվը, Մոսկվայի սինօդական երգեցիկ խումբը։ Քաղաքը զարդարված է ծաղիկներով ու դրօշակներով։

Պարիզ.—Վիշից եկաւ արտաքին գործերի մինիստր Սազօնովը և կայարանում դիմաւորվեց դեսպան Իզվօլսկիից, դեսպանատան պաշտօնեաներից, ֆրանսիական արտաքին գործերի մինիստրութեան ներկայացուցչից և դեսպան Դէլկասէից,

Հավր.—«Վօլտուրնօ» շոգենաւի խոհարարը հաւատացնում է, որ հրդեհը առաջ եկաւ ճանապարհորդներից մինի ձգած ծխախոտից։

Լօնդօն.—Գրեզվէնտ եկաւ «Մինէապօլիս» նաւը՝ «Վօլտուրնօյի» 30 ճանապարհորդներով, որոնք ռուսաստանցիներ և բալկանցիներ են։

«Ժիւնարտ» նաւագնաց ընկերութիւնը «Կօմպինիա» նաւից անթել հեռագրով տեղեկութիւն առաւ, որ սեպտ. 29-ին, ցեր. ժամը 2 և կէսին նա մօտեցաւ դեռ ծխացող «Վօլտուրնօյին», որ գտնվում էր հիւսիսային լայնութեան 47 և արևմտեան երկարութեան 33 աստիճանի վրա։

Լիբավա.—Ստացվեց այն ռուսահպատակների ցուցակը, որոնց ազատեց «Ցար» նաւը «Վօլտուրնօ» շոգենաւի խորտակման ժամանակ։

Լօնդօն.— Կալանաւորվեց միտինգի գնացող սուֆրաժիստուհի Սիլվիա Պանկգէրստը։

Միտինգից առաջ ամբոխը փողոցներում ողջունեց սուֆրաժիստուհիներին։ Սիլվիային ձերբակալելիս ոստիկանութիւնը ընդհարում ունեցաւ ամբոխի հետ։ Հեծեալ ոստիկանութիւնը ցրեց ամբոխը, որի ժամանակ տուժեցին կանայք և երեխաները։ Կատարվեցին մի քանի ձերբակալութիւններ։ Միտինգը չը կայացաւ։

Պարիզ. — Վերադարձաւ աջողութեամբ Պուանկարէն։

Վիէննա.—«Ցայտ» տեղեկութիւնների համաձայն, զօրքը նոր բարենորոգութեամբ բազմանալու է 552,000 մարդով, որոնցից 27,000-ը նաւաստիներ են լինելու։ «Նէյէ-Ֆրէյէ-Պրեսսէն» բողոքում է զօրքի կազմը մեծացնելու դէմ, յենվելով երկրի տնտեսական ու ֆինանսական ցաւալի դրութեան վրա։

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ԹԻՒՐՔԻԱՆ

Համաձայն վերջին տեղեկութիւնների, ռուս-թիւրքական բանակցութիւնները 1900 թ. համաձայնութիւնը վերաքննելու մասին մօտենում են իրանց վախճանին։

1900 թ. ստորագրված համաձայնութիւնը վերաբերում էր այն պայմաններին, որոնց կատարմամբ Թիւրքիան կարող է երկաթուղիներ կառուցանել Հայաստանում և Անդրկովկասին մերձակայ բոլոր սահմանային թիւրքական շրջաններում։

Չը նայած Ռուսաստանի իրաւունքների պարզ ձևակերպութեան պակասաւորութեան, 1900 թ. համաձայնութիւնը իր մէջ, սակայն, պարունակում էր հետևեալ երեք որոշ սկզբունքային կէտերը։

Ռուսաստանին սահմանակից շրջաններում երկաթուղիներ կառուցանելու իրաւունքը պատկանում է միմիայն Թիւրքիային։

Վերոյիշեալ շրջաններում երկաթուղիներ կառուցանելու կօնցեսիաներ ստանալու բացառիկ իրաւունքը պատկանում է Ռուսաստանին։

Առանց Ռուսաստանի համաձայնութեան, Թիւրքիան իրաւունք չունի տալ Ռուսաստանին սահմանակից շրջաններում որևէ երկաթուղային կօնցեսիա ոչ մի օտարազգի մեծ պետութեան։

Որովհետև Ռուսաստանը չը կամեցաւ օգտվել Հայաստանում երկաթուղիներ կառուցանելու իր իրաւունքից, 1900 թ. համաձայնութիւնը մնաց անգործադրելի։ Սակայն՝ ժամանակի ընթացքում վերացվեցին այն մի քանի լուրջ պատճառները, որոնք դրդում էին Ռուսաստանին այդօրինակ պասիվ դեր խաղալու, և այն ժամանակ միտք յղացաւ վերաքննելու 1900 թ. համաձայնութիւնը։ Ռուսաց կառավարութիւնը այն եզրակացութեան յանգեց, թէ նա հիմք չունի խոչընդոտ հանդիսանալու Հայաստանում երկաթուղիներ կառուցանելուն, եթէ այդ երկաթուղիների կառուցումը գտնուի յուսալի ձեռքերում, և եթէ Ռուսաստանին տրուի վերահսկողութեան իրաւունք այդ շրջանում։

Վերջացանում Ռուսաստանի, Ֆրանսիայի և Թիւրքիայի միջև բանակցութիւններ սկսվեցին այնպիսի պայմաններ մշակելու մասին, որոնց գոյութեամբ Ռուսաստանը արգելք չը լինի երկաթուղիներ կառուցանելուն, իսկ Ֆրանսիան համաձայնէ կառուցանել այդ երկաթուղիները։ Ամենից առաջ կայացաւ սկզբունքային համաձայնութիւն Ֆրանսիայի և Թիւրքիայի միջև։ Այդ համաձայնութեան մէջ, որ ստորագրվեց մի փոքր առաջ Պարիզում Ջավիդ-բէյի և Պիշոնի ձեռքով, ծանօթութիւն էր գրված, թէ Թիւրքիան համաձայն է կոնցէսիա տալ Ֆրանսիային Հայաստանում երկաթուղիներ կառուցանելու, եթէ միայն Ռուսաստանը իր կողմից տայ համաձայնութիւն։

Այդ համաձայնութեան մէջ ընդգծված երկաթուղիների թւում կային Երզրում—Տրապիզոն, Սամսոն—Սըվաս—Դիարբէքիր—Խարբերդ և ուրիշ գծեր ևս, որոնք ճիւղաւորվելու են դէպի ռուսական սահմանը։ Բացի դրանից, այդ համաձայնութեան մէջ, ըստ լուրերի, ի միջի այլոց յիշատակված է, որ Ռուսաստանի համաձայնութեամբ Հայաստանում կառուցվելիք երկաթուղիները կարող են միացուել Կովկասում գոյութիւն ունեցող ռուսական երկաթուղիների հետ։

Ինքնին պարզ է, որ Ֆրանսիայի և Թիւրքիայի սկզբունքային համաձայնութիւնը կապվեց Ռուսաստանի գիտութեամբ և համաձայնութեամբ։ Բայց որպէսզի այդ սկզբունքային համաձայնութիւնը կարողանայ ույժ ձեռք բերել, անհրաժեշտ էր Ռուսաստանին՝ Թիւրքիայի հետ նոր համաձայնութիւն կնքելով՝ Ֆրանսիային տալ 1900 թ. համաձայնութիւնից բղխող իրան վերապահված իրաւունքների մի մասը։

Այդ առիթով Ռուսաստանի և Թիւրքիայի միջև սկսված բանակցութիւնները լուրջ դժուարութիւններ առաջ չը բերին և, ինչպէս արդէն վերևում ասվեց, մօտենում են իրանց վախճանին։ Այդ բանակցութիւնները կաւարտվեն 1900 թւի համաձայնութեան աւելի ուրոյն ձևակերպութեամբ այն իմաստով, թէ առհասարակ Հայաստանում երկաթուղիներ կառուցանելը կարող է լինել անպայման Ռուսաստանի համաձայնութեամբ ու նրա վերահսկողութեամբ։

Այդպիսով Ռուսաստանը, բնաւ հետամուտ չը լինելով որևէ առանձին երկաթուղային կոնցէսիա ձեռք ձգելու կ. Պոլսում, կամենում է ամուր հիմքերի վրա դնել որոշ շրջագծում, այսինքն Հայաստանում և Կովկասին մերձակայ շրջաններում մօտաւորապէս միևնոյն դրութիւնը, որպիսին գրաւել են Անատոլիայում՝ Գերմանիան, Միջագետքում՝ Անգլիան, Ադալիայում և Պամփիլիայում՝ Իտալիան և Սիրիայում՝ Ֆրանսիան։

ԻՒՇՉԻՆՍԿԻԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

ԲԷՅԼԻՍԻ ԳՈՐԾԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Կիեվ, 2 նոյեմբերի

Հարցաքննվում են վկաներ Բօգդանօվսկին և մեղադրեալի եղբայր Արօն Բէյլիսը։ Առաջինը ոչինչ նոր բան չէ յայտնում, երկրորդի ցուցումները, մոռանալու պատճառով, կարդացվում են։

Կարդացվում են բացակայ Բօնդարէվի ցուցմունքները, որ պնդում է, թէ նա չէ ասել Գօլուբէվին, թէ երբ Բէյլիսը առանձին բաղարջ է թխել քրիստոնէական արիւնով։

4 ժամ շարունակ հարցաքննվում է խուզարկու ոստիկանութեան նախկին գործակալ Պօլիշչուկը, որ հետախուզել է 1911 թ. մայիսին Վիգրանօվի հետ միասին Կրասօվսկիի ղեկավարութեամբ, և ցոյց է տալիս, որ հետախուզելու սկզբին պարզվեց, որ դիակը գտնվելուց 2 շաբաթ առաջ Իւշչինսկին մի քանի երեխաների հետ խաղում էր. նրանց արտաքսեց, Շախօվսկիի ասելով, սևամօրուս մի մարդ, ըստ երևոյթին Բէյլիսը։ Յետոյ Շախօվսկին յաճախակի փոփոխեց իր ցուցումները։ Հարց ու փորձից վկան իմացաւ, որ Բէյլիսի մօտ մարտ ամսին եկել էին երկու մարդ, տեղի էին ունենում աղօթքներ, գոյութիւն ունի գործարանում ինչ որ աղանդ։ Իւշչինսկին լինում էր Բէյլիսի մօտ։ Կրասօվսկին, լինելով գործարանում, եկաւ այն եզրակացութեան, որ երեխան սպանվեց ոչ գործարանում։ Կալանաւորեցին ազգականներին, որոնց հարց ու փորձից ոչինչ չը պարզվեց։ Գործարանում գտնվող մի հրեայ խոստացաւ երեխային ցոյց տալ իր հօրը։ Վկան կարծում է, որ այդ մարդը Շնէէրսօնն է, որ գրված է Բէյլիսի գրքում մարտի 12-ին։ Վկային տարօրինակ թւաց Կրասօվսկիի վարմունքը, մանաւանդ երբ Բէյլիսին կալանաւորելուց առաջ փախաւ Շնէէրսօնը։ Այն ենթադրութիւնը, թէ երեխային գուցէ սպանել են գողերը, նորից գլուխ բարձրացրեց Կրասօվսկիի ժամանակ Բէյլիսի կալանաւորութիւնից յետոյ։ Շնէէրսօնը, վկայի կարծիքով, խուսափում էր ձերբակալութիւնից, որովհետև գողերի ձեռքով սպանվելու ենթադրութեան հետ միասին նախազգուշութիւն էր ստացել, թէ Կրասօվսկին, Շնէէրսօնը և Բրազուլ-Բրուշկօվսկին դաշն են կապել։ Ժենիա Չեբերեակը գիտէր գործի մանրամասնութիւնները, բայց նրան արգելում էին խօսել կամ մայրը, որը կամենում էր, որ նրան հանգիստ թողնեն, կամ դրդում էին ուրիշները։ Սկզբում Ժենիա Չեբերեակը լաւ ցուցում տուեց, յետոյ՝ վատ, ապա կրկին լաւ, և հենց այդ ժամանակ էլ մեռաւ։ Վկան կասկածում է, որ նա մեռաւ Կրասօվսկիի մօտ խմորեղէն ուտելուց յետոյ։ Վկային յանձնարարվեց հսկել Չեբերեակի տան վրա։ Նա ներկայ էր Ժենիայի վերջին րօպէներին։ Զառանցանքի ժամանակ կցկտուր բացականչութիւններից կարելի էր եզրակացնել, որ Անդրիւշը հիւանդին ներկայանում էր տարբեր դրութիւններով։ Երբ գիտակցութիւնը եկաւ, մայրը ասում էր, մատնանշելով Վիգրանօվի վրա. «Ասա սրանց, սիրելի զաւակս, ոչ քեզ, ոչ էլ քո մօրը ձեռք չը տան, որովհետև մենք ոչինչ չը գիտենք Անդրէյ Իւշչինսկիի գործի մասին»։ Ժենիան պատասխանում էր. «Թող, մայրիկ, շատ ծանր է այդ մասին յիշելը»։ Սկզբում սպանութիւնից յետոյ ձերբակալվեցին 5 քրիստոնեայ և ոչ մի հրեայ։

Պաշտպանի միջնորդութեան համաձայն, արձանագրութեան մէջ է մուծվում Պօլիշչուկի այն ցուցումը՝ թէ մի քանի՝ վկաներ ասում էին, որ Իւշչինսկին մարտի 12-ին գրքեր ունէր գօտկին խրած, միւսները յայտնում էին, որ առանց գրքերի էր։

Ապա դատախազը հարցնում է վկային՝ թէ փոխվե՞լ է, արդեօք, Բէյլիսը բանտարկութեան ժամանակ։ Պօլիշչուկը պատասխանում է, որ Բէյլիսը փոքր ինչ լաւացել է, առաջ մօրուսը աւելի երկար էր։

Մակլակօվը հարցնում է, թէ ինչու համար վատ համբաւ ունեցող գողերի ընկեր Չեբերեակօվայի վրա ուշադրութիւն չը դարձվեց։ Վկան ասում է, որ Չեբերեակի բնակարանը 150 քայլ հեռու է գտնվում այն քարայրից, ուր երևան հանվեց դիակը, ուրեմն շատ մօտիկ։ Վկայի կարծիքով, յանցագործները չեն ծածկում տան հետքերը։

Լիւդմիլա Չեբէրեակ աղջիկը ցոյց է տալիս, որ վերջին անգամ Անդրիւշն եկաւ վաղ առաւօտ առանց վերարկուի, գրքերը գօտկին խրած։ Չեբէրեակի մայրը շուկայումն էր, հայրը ծառայութեան էր գնացել. Անդրիւշը, չը մտնելով բնակարանը, ձայնեց երեխաներին. գնացին խաղալու Ժէնիան, Լիւդմիլան և Վալէնտինա Չեբէրեակը. Դունիա Նակօնէչնայան, Անդրիւշը և մի անյայտ երեխայ մտան ցանկապատի ճեղքից, սկսեցին սլքվել. Նրանց ետևից ընկան Բէյլիսը, սրա փոքրիկ տղան և ուրիշ երկու հրեայ. Բէյլիսը բռնեց Ժէնիային և քաշեց իր մօտ. Ժէնիան դուրս պրծաւ, իսկ Անդրիւշին, ինչպէս ասում էր քոյր Վալիան, Բէյլիսը քաշելով տարաւ դէպի վառված վառարանը. Թէ նա յետոյ ինչ եղաւ, յայտնի չէ։ Սկզբում երեխաները գնում էին Բէյլիսի մօտ կաթի, այնտեղ տեսնում էին ինչ-որ հրէաների։

Դէմ առ դէմ բերում են վկայ Դունիա Նակօնէչնայային։ Սա վկայում է, որ երբ խաղում էին գործարանում, Բէյլիսը չընկաւ նրանց ետևից և, դիմելով վկային, նա ասում է. «Ցիշիր, և յետոյ կը սաես»։ Նախագահը կանչեցնում է Նակօնէչնայային։ Լիւդմիլան լալիս է և ասում. «Ես վախենում եմ»։ Ապա Լիւդմիլան ասում է, որ իրանց մօտ եկած Կրասօվսկին խրատում էր. «Աւելորդ ոչինչ չասես, շատ չը խօսես դատարանում»։ Պօլիշչուկը սպառնում էր. «Եթէ ցոյց կը տաս Բէյլիսի դէմ, կենդանի չես մնայ»։ Նախագահը հարցնում է թէ ճանաչո՞ւմ է, արդեօք, աղջիկը Պօլիշչուկին, և առաջարկում է գտնել նրան դահլիճում։ Աղջիկը գնում է դէպի Պօլիշչուկը. չը հասած նրան՝ կանգնում է, լալիս է և ասում՝ «վախում եմ», յետոյ ցոյց է տալիս Պօլիշչուկին։ Պօլիշչուկը ժխտում է, թէ սպառնացել է։ Յետագայ հարցին Լիւդմիլան ասում է, որ մայրը հրամայեց ասել սոսկ ճշմարտութիւնը։

Կարդացվում են Ժենիա Չեբերեակի երբակի ցուցմունքները։

Երեկոյեան նիստում դատաւորների աթոռների ետևը տեղեր են գրաւել մեծ թւով դատական պաշտօնեաներ. հասարակութեանը յատկացված սրահը լիք-լեցուն է։

Սկսվում է Վէրա Չեբէրեակի հարցաքննութիւնը։ Վկան մանրամասն նկարագրում է, որ իր երեխաները ծանօթ էին Անդրիւշի հետ, խաղում էին միասին, սլքվում էին։ Դիակը գտնվելու հետևեալ օրը, երբ նա քարայրի մօտ էր, Ֆէօդոր Նէժինսկին ասաց. «Մեզ ամէն ինչ յայտնի է, որ այդ կատարվեց փողի պատճառով»։ Իւշչինսկիի թաղումից յետոյ Մալիցկայան, որի հետ վկան կռուել էր, յայտարարութիւն տուեց, մեղադրելով Չեբէրեակին սպանութեան մէջ. վկային կալանաւորեցին։

(Կը շարունակվի)

ԲԷՅԼԻՍԻ ԳՈՐԾԻ ՇՈՒՐՋԸ

Կիեվում հրատարակվում է վաղուց ի վեր մի թերթ «Кіевлянинъ» անունով, որ պահպանողական րէտրօգրադ ուղղութիւն ունի և որի խմբագիրն էր առաջ Պիխնօ, իսկ մի քանի տարուց ի վեր խմբագրի պաշտօնը ստանձնել է Պետական Դումայի աջակողմեան բանակի լիդէր Շուլգինը։ Լրագիրը, իբրև ռուսական նացիօնալիստ և աջակողմեան թերթ, հակասեմիտական է։

Սակայն նոյն իսկ այդ աջակողմեան, րէտրօգրադ և հակասեմիտական թերթը նորերս տպեց երկու այնպիսի յօդուածներ Բէյլիսի պրօցէսի առիթով, որ անհգին ցնցումն առաջ բերեց ոչ միայն մամուլի, հասարակութեան, այլ և պաշտօնական շրջաններում, և Կիեվի նահանգապետը կարգադրեց անմիջապէս գրաւել լրագրի համարը և խմբագրին ենթարկել դատաստանական պատասխանատուութեան։ Իր ամբողջ 50-ամեայ գոյութեան ընթացքում, թերթը առաջին անգամն է, որ ենթարկվում է կօնֆիսկացիայի։

Այդ յօդուածների մէջ լրագիրը դատապարտում է պրօկուրօրական մարմինը և մերկացումներ է անում՝ ապացուցանող, որ Բէյլիսը անմեղ է, անարդարութեամբ է բանտարկված և գործը ուղղակի սարքված է։

Չը պէտք է իրաւագէտ լինել, ասում է թերթը, այլ միայն առողջ մտածող մարդ, հասկանալու համար որ մեղադրանքը Բէյլիսի դէմ մի թօթովանք է, որ ամենափոքր ընդունակ փաստաբանը ջարդուփշուր կանի։ Ակամայ մարդ վշտանում է Կիեվի պրօկուրօրութեան մասին, որ վճռել է հանդէս գալ ամբողջ աշխարհի դատաստանի առաջ այդպիսի խղճուկ բագաժով։

Ապա մեղադրելով պրօկուրօրին, որ նա ուղղակի գործել է Զամըսլովսկիի ազդեցութեան ներքոյ, լրագիրն ասում է.

«Անարդար գործը ցանկալի պտուղ չի տայ։ Ասում են. «Մեզ պէտք չէ Բէյլիսը. մեզ հարկաւոր է ապացուցանել րիտուալը (ծիսական նպատակով սպանութիւնը)։ Իսկ Բէյլիսը... Թող նրան թէկուզ արդարացնեն»։

«Բայց դուք մի համարձակէք այդպէս խօսել։ Մի համարձակէք, որովհետև այդպէս դատելով, դուք, որ պնդում էք րիտուալի մասին, ինքներդ մարդկային զոհաբերութիւն էք կատարում։ Թող չնչին լինի այդ Բէյլիսը, բայց այնուամենայնիւ դուք իրաւունք չունէիք նստեցնել նրան բանտ, քանի որ համոզված չէիք նրա մեղաւորութեան մէջ։

«Դուք վերաբերվում էք նրան, իբրև ճագարի, որին դնում են անդամահատական (վիվիսեկցիայի) սեղանի վրա։ Ոհ, պարոններ, զգոյշ կացէք։ Կան իրեր, կան տաճարներ, որ չէ կարելի անպատիժ կործանել»։

Ուրեմն որքան մեծ է անարդարութիւնը, եթէ այդ թերթը, որ որոշ խնդիրներում նոյն իսկ սև-հարիւրեակային ուղղութիւն է բռնել, այդպիսի լեզու է գործածում։

Խօսելով այդ նշանաւոր յօդուածի մասին «Рус. Вѣд.» գրում է. «Մենք և «Кіевлянинъ» թերթը միշտ կանգնած ենք եղել զանազան ափերի վրա՝ բաժանված խոր և լայն անդունդով։ Թւում էր, թէ այդ անդունդը յատակ չունի։ Սակայն Բէյլիսի թշուառ գործը ցոյց տուեց, ի պատիւ ռուս ժուռնալիստիկայի, որ դա մոլորութիւն էր։ Թող այն, ինչ որ միացնում է մեզ «Кіевл.»-ի հետ, լինի միայն մարդկային կուլտուրայի մի փոքր և բարակ շերտ. Թող մենք նրա հետ միասին ունենանք մի ընդհանուր աստուած, միայն մի հատիկ «տաճար, որը չէ կարելի անպատիժ կործանել»։ Թող մեզ միացնէ միայն զզւանքը «հրէշային թէօրիայի» դէմ, որ արդարացնում է «մարդկային զոհաբերութիւնը», որ թոյլ է տալիս վերաբերվել թէկուզ ամենաչնչին մարդուն «իբրև մի ճագարի, որին դնում են կենդանահատութեան աթոռի վրա»։ Բայց մեր բոլոր արմատական, խորին և անհաշտելի տարաձայնութիւնները «Кіевл.» թերթի հետ չեն կարող անարժէք դարձնել պատուի և մարդկային արժանապատուութեան այդ բարակ թելը, որ միացնում է մեզ մեր վաղեմի և մշտական հակառակորդի հետ»։

—

Մայրաքաղաքների, ինչպէս և ուրիշ քաղաքների բարձր կրթական հաստատութիւններում բանաձևերով բողոք է յայտնվում կրկին Բէյլիսի գործի դէմ։

—

Ռուս յայտնի օրէնսգէտները զբաղված են Բէյլիսին մեղադրող դատախազ Վիպպէրի կարգադրութիւնից՝ ստենօգրաֆիկ հաշիւ տպելը արգելելու մասին։ Օրէնսգէտների ասելով՝ Վիպպէրը թիւր հասկացողութիւն ունի օրէնքների մասին։

—

Ռուսաստանի զանազան քաղաքներում հրէաները ամեն օր աղօթք են կարդում սինագօգներում, խնդրելով Աստուծուց գթութիւն և փրկութիւն րիտուալ սպանութեան մեղադրանքից։

—

Խարկովի հեռագրատանը չընդունեցին կանանց բարձր դասընթացքների ունկնդրուհիների հեռագիրը, որ ողջոյնի խօսքեր էր պարունակում, ուղղված Բէյլիսի պաշտպաններին։

—

«Гражданинъ» թերթը խստագոյնս դատապարտում է դատախազի վարմունքը, որ Բէյլիսի գործին տուել է րիտուալ սպանութեան բնաւորութիւն։

—

«Кіевлянинъ»-ը շարունակում է հակառակ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԷՅԼԻՍԻ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ

(Պատմական տեսութիւն)

Տասներեքերորդ դարը

Նախքան առաջին դատավարութիւնը րիտուալ (ծիսական) սպանութեան մասին, խօսվել է հրէաների ձեռքով կատարվող քրիստոնէաների սպանութեան մասին։

Այդ մասին յիշատակում է V դարում քրիստոնեայ պատմաբան Սօկրատը։

Բացատրում էին, որ այդ սպանութիւնների պատճառ հանդիսանում է՝ հրէաների դէպի քրիստոնեաներն ունեցած ատելութիւնը, հրէաներին սպանելու համար քրիստոնեաներից վրիժառութիւնը, սակայն սպանութիւնների մասին ճառողներից ոչ ոք չէր պնդում, թէ դրանք կատարվում էին ծիսական նպատակներով։

Առաջին անգամ այդ մեղադրանքը շրջրատվեց XIII դարում։

Այն շրջանում, երբ Եւրոպան նոյնպէս առաջին անգամ ծածկվեց խարոյկների ծխով, որոնց վրա բարեպաշտ սաղմոսերգուների երգասացութեամբ վանականները այրում էին կախարդներին։

Հզօրանօրէն բացատրելու համար հրէաներին րիտուալ սպանութիւնների մէջ մեղադրութեան ծագումը, հետևեալ համեմատութիւնը շատ բնորոշ է.

«Տասներեքերորդ դարը,—ասում է րիտուալ սպանութիւնների պրօցէսների պատմաբաններից մէկը,—տեսաւ երեխաների խաչակիր արշաւանքը, որոնք անհամար խմբերով հանդէս էին գալիս սուրբ երկիրը իր սրբազան քաղաքներով անհաւատների ձեռքից խլելու նպատակով. Նա տեսաւ ս. Ֆրանչիսկոսի աղքատ հետևողներին, իրանց ամբողջական դատարկութեամբ աշխարհին Քրիստոսի պատգամները վարդապետողներին. Նա լսեց իրանք իրանց խարազանողների աղանդի (գէյսլեր) վշտալի երգերը, որ արիւնով ու արտասուքով երկնքից գութ էր աղերսում և խնդրում խափանել աստուածային պատիժները, ժանտախտն ու սև մահը. Նա խորին ակնածութեամբ երկրպագում էր ոգու հերոսների առաջ. Նա երկրպագում էր նաև երանելի Ալբէրտի առաջ, որ կոչվեց Մեծն, բնութեան ու նրա օրէնքների խորապէս հմտութեան համար։ XIII դարը ուրախալի զարմանքով նայում էր այն ժամանակ աւարտվող Ստրասբուրգի տաճարին, յոյսով դիտում էր այն հիմքը, որի վրա պէտք է բարձրանար Կեօլնի հսկայ տաճարը. Նա տեսաւ մեծ Իննօկէնտիոս պապին հռոմէական փառքի գերագոյն օրէօլով զարդարված գահի վրա. Նա զմայլվում էր Լուդովիկոս IX ս. թագաւորով, հրճվում էր Տիւրինգէնի սուրբ պրինցուհի Եղիսաբէթով։

«Բայց XIII դարը միևնոյն ժամանակ ցաւալի դարագլուխ ևս եղաւ. հռոմա-գերմանական կայսերական գահը գրաւել էր Ֆրիդրիխ II։ Մի մարդ, այն աստիճանի անաստուած և անբարոյական, որ նմանվում էր աւելի շուտ կռապաշտի, քան քրիստոնեայ թագաւորի. Նրան էր վերագրվում ասացուածքը, թէ աշխարհը խաբվեց երեք խաբեբաներից՝ Մովսէսից, Քրիստոսից և Մահմէդից... Այդ այն ժամանակն էր, երբ վտանգաւոր կեղծ մարգարէները վարկաբեկում էին գահը ու եկեղեցու սեղանը, սրբապղծում էին տաճարները, սպանում էին քահանաներին, երբ ամենուրեք գոյութիւն ունէր հաւատ առ սատանաների և չար ոգիների ազդեցութիւնը ու ույժը, երբ հազարաւոր քրիստոնեաներ և հրէաներ ենթարկվում էին խստագոյն տանջանքների և յետոյ կիզվում խարոյկների վրա... Տասներեքերորդ դարը այն ժամանակն էր, երբ միաժամանակ իր յաղթանակն էր տօնում հաւատը, և մռայլ ու վայրենի օրգիաներին էր նուիրված սնոտիապաշտութիւնը։ Ահա հէնց այդ ժամանակը պէտք է ի նկատի ունենալ, եթէ կամենում են կանոնաւոր հասկացողութիւն կազմել հրէաներին րիտուալ սպանութիւնների մէջ մեղադրելու մասին»։

—

Մի դէպք Ֆուլդում

Դրան առիթ տուողը հետևեալ դէպքը ծառայեց.

1235 թ. Ֆուլդ քաղաքում Ծննդեան առաջին օրը այրվեց մի ջրաղաց։ Եկեղեցուց վերադարձած ջրաղացպանը իր զաւակներին գտաւ մեռած։ Պատահմամբ Ֆուլդում գտնվող ֆրանսիացի ասպետ-խաչակիրները, հետևելով «խաչին թշնամի հրէաներին կոտորելու» կանոնին, ջարդ կազմեցին։ Հրէաներին բռնում էին, մեղադրելով ջրաղացը հրդեհելու և երեխաներին սպանելու մէջ։ Տանջանքների տակ նրանք խոստովանում էին, որ նրանցից երկուսը սպանեցին երեխաներին, որոնց արիւնը հարկաւոր էր նրանց բուժիչ պէտքերի համար։

Տանջանքից հարկադրված խոստովանութեան հիման վրա՝ դատաւորները դատապարտեցին մահվան ոչ թէ երկու, այլ 34 հրեայի։

Նրանց բոլորին այրեցին խարոյկի վրա։

Ֆրիդրիխ II կայսրը, որին Ֆուլդի քաղաքացիք գանգատվեցին հրէաների դէմ, խիստ պատասխանեց.

— Երբ երեխաները մեռած են, գնացէք, թաղեցէք նրանց. չէ՞ որ նրանք այլևս ոչնչի պիտանի չեն։

Իսկ գործը քննելուց յետոյ հրաման արձակեց, որով արգելում էր յետագայում մեղադրել հրէաներին րիտուալ սպանութիւնների մէջ։

Ֆուլդի դէպքի քննութիւնից մի քանի տարի յետոյ Իննօկէնտիոս IV պապը ևս հրատարակեց հետևեալ հրամանը.

«Ոչ ոք,—ասված էր նրանում,—չը պէտք է մեղադրէ հրէաներին այն բանում, թէ նրանք գործ են ածում իրանց կրօնական ծիսակատարութեան ժամանակ մարդկային արիւն, որովհետև Հին-Ուխտը արգելում է նրանց գործածել ոչ միայն մարդու, այլ առհասարակ ոչ մի արիւն։ Որովհետև Ֆուլդում և ուրիշ շատ տեղերում այդ կասկածների շնորհիւ սպանվեցին բազական թւով հրէաներ, ուստի մենք ներկայ հրամանի հեղինակութեան ույժով ամենախստագոյնս արգելում ենք այդօրինակ խայտառակ երեւոյթները։ Իսկ եթէ որևէ մէկը, գիտենալով այս հրամանի բովանդակութիւնը, համարձակվի հակառակը գործել, նա կը բանադրվի եկեղեցուց»։

—

Ի պաշտպանութիւն հրէաների

Այդպէս ծագեց առաջին մեղադրանքը հրէաների դէմ։

Այդպէս առաջինը հանդէս եկան հերքելու այն՝ կայսրը և պապը։

Սակայն րիտուալ սպանութիւնների մէջ հրէաներին մեղադրելը չէր դադարում, չարամիտ առասպելը խաւարամիտ ամբոխի մէջ անցնում էր բերանից-բերան և հոգևոր ու աշխարհիկ իշխանութիւնները յաճախ ստիպված էին լինում իրանց ձայնը բարձրացնել ի պաշտպանութիւն հրէաների։

Իննօկէնտիոս IV-ից յետոյ, որ ի պաշտպանութիւն հրէաների հրատարակեց չորս կոնդակ, XIII դարում Գրիգոր X պապը վաւերացրեց այն պատիժները, որ այդ կոնդակները սպառնացել էին անսաստողներին։ XV դարում րիտուալ սպանութիւնների ստայօդ հէքիաթների դէմ ասպարէզ եկան Մարտին V և Նիկողայոս V պապերը, XVI դարում ստայօդ մտածմունքների դէմ բողոքեց Պօղոս III պապը։

Կաթոլիկ եկեղեցու պետերի հետ րիտուալ սպանութիւնների առասպելի դէմ մաքառում էր և կաթոլիկ հոգևորականութիւնը։ XVII դարում դօմինիկեան կարգի աբբահայր Ցովհան Բապտիստ-դը-Մարինիս, XVIII դարում կարդինալ Լօրէնցօ Գանգանէլլի, XIX-ում եպիսկոպոս Կնաբէնբաուէր բուռն կերպով հանդէս եկան ի պաշտպանութիւն հրէաների։

Ֆրիդրիխ II սկսեց իրանով կայսրերի և թագաւորների մի շարքը, որոնք պաշտպանեցին հրէաներին իրանց հրովարտակներով։ Միևնոյն տեսակ հրովարտակներով դիմեցին ժողովրդին XIII դարում Հաբսբուրգի Ռուդոլֆը, Բոհէմիայի թագաւոր Օտտօկար II-ը, ֆրանսիական թագաւոր Ֆիլիպ Գեղեցիկը, XIV դարում՝ Լուդովիկոս Բաւարացին, XV դարում՝ Ֆրիդրիխ III-ը, XVI-ում՝ Կարլոս V-ը։

Կարլոս V-ի ժամանակակից սուլթան Սուլէյման II-ը հրամայեց, որպէսզի «ոչ մի դատաւոր պետութեան մէջ չը մեղադրէ հրէաներին մարդկային արիւն գործածելու մէջ»։

Իսկ 1840 թ. սուլթան Աբդուլ-Մէջիդը արգելեց իր ֆերմանով «անհանգստացնել կամ չարչարանքի ենթարկել այդ տեսակ անհիմն մեղադրանքներով մի ժողովրդի, որի անմեղութիւնը ճանաչված է»։

—

Տանջանքներ

Ծիսական սպանութիւնների մէջ մեղադրելը կցորդվում է մեղադրվողների տանջանքներով։

Իր կոնդակներից մէկում Իննօկէնտիոս IV պապը 1247 թ. գրում էր ծագած մեղադրանքներից մէկի առիթով.

— Տղամարդկանց սեռական անդամները կտրում էին, կանանց՝ կրծքերը. այդօրինակ ու զանազան ուրիշ տանջանքներով նրանց տանջում էին մինչև այն աստիճան, որ նրանք, ինչպէս ասում են, բերանով խոստովանեն այն, ինչ չէր կարող տալ նրանց յանցանքի գիտակցութիւնը, որովհետև նրանք գերադասում էին մեռնել մի անգամից, թէև տանջալի մահով, քան թէ ապրել չարչարանքների ու անվերջ մորմոքումների մէջ...

Այն, ինչին դիմում էին XIII դարի դատաւորները, մնաց նաև XIX դարում։

Երուսաղէմի անգլիական միսիայի քահանայ Գ. Վ. Պիերիտցը, քննելով իր ժամանակ Եւրոպայի ուշադրութիւնը գրաւած այն գործը, որ վերաբերում էր Դամասկոսի հրէաներին՝ Թոմասին և սրա սպասաւոր Իբրահիմին սպանելու մէջ մեղադրելուն, պնդում էր թէ՝ «հնարաւորութիւն չը տալով մեղադրեալներին պաշտպանվելու, նրանց տանջում էին ամենաանգութ կերպով, որպէսզի ստիպեն նրանց սուտ խոստովանելու իրանց յանցանքը»։

Պիերիտցի ասելով, մեղադրեալներին ծեծում էին մտրակներով, հանում էին աչքերը իրանց խոռոչներից, պոկում էին սեռական անդամները կամ ոլորում էին նրանց, պահում էին երեք օր շարունակ ոտքի վրա, բարձրացնելով ընկնողներին զինւորի սուինեսոխալնիկների սաստիկ գրգռման, տպել պաշտպանողական յօդուածներ Բէյլիսի համար։

—

Իշխանութիւնը շարունակում է գրաւել կիևլի առաջադէմ թերթերի համարները, որոնց մէջ երևում են յօդուածներ ի պաշտպանութիւն հրէայ ժողովրդի։

—

Մոսկվայում յայտնի բարեգործ Շախօվը հեռագրով խնդրեց «Кіевлянинъ»-ի խմբագրութիւնից թոյլ տալ հիմնել թոշակառուի տեղ Մոսկվայի ժողովրդական համալսարանում այն յօդուածագրի անունով, որ տպել էր պաշտպանողական յօդուած յիշեալ լրագրում Բէյլիսի համար։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ, լուրերի համաձայն, Բէյլիսին արդարացնելու դէպքում հրաժարական է տալու արդարադատութեան մինիստր Շչէգլօվիտօվը։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԲԷՅԼԻՍԻ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

—

Պարիզ.—«Temps» և «L'Humanité» թերթերը, որոնք այնքան ծայրայեղ թերթեր են իրար նկատմամբ, Բէյլսի գործը որակելում միացել են իրար։

«Երկու Ռուսաստան,—ասում է «Temps»-ը,—ռէակցիօն և առաջադէմ՝ միացել են այդ դատավարութեան մէջ։ Կօշմարային, սուտ առասպելը, որ հերքվում է բոլոր մտածող մարդկանցից և եկեղեցու հայրերից, հանդիսանում է միայն փորձաքար ֆանատիզմը գրգռելու համար»։

«Մինթէ,—բացագանչում է «L'Humanité»-ի մէջ Ժօրէսը,—իշխանութիւնները իրանց հաշիւ չեն տալիս այն զրպարտութեան առիթով, որ հանված է միջնադարեան խաւարից»։

Առհասարակ Բէյլիսի գործը Ժօրէսը համարում է «չափազանց կոպիտ ձև, որ յենվում է լոկ մութ ոյժերի ազդեցութեան վրա»։

—

Լօնդօն.—Խօսելով Բէյլիսի մեղադրական ակտի մասին, անգլիական մամուլը տարակուսում է այդ մեղադրանքի թուլութեան առիթով։ Լրագիրները բաւական հիմք չեն գտնում, որոնք արդարացնէին մեղադրեալ Բէյլսի 26-ամսեայ նախնական բանտարկութիւնը։

«Times»-ի կարծիքով «բովանդակ մեղադրական ակտը հիմնված է ոչ թէ փաստերի, այլ սոսկ լուրերի վրա»։

—

Հռոմ.—Իտալական մամուլը շարունակում է խիստ դարձուածքներով դատապարտել Բէյլիսի գործը, ընդգծելով մեղադրանքի անհիմնութիւնը և տենդենցիօզ լինելը։

Պաշտօնական «Tribuna»-ն մատնանշում է, որ «այդ գործը յարուցանելու հիմունք ծառայեց մասսաների տգիտութիւնը և «իսկական ռուս» մարդկանց ագիտացիան»։

—

Վիեննա.—Պաշտօնական «Sonn und Mont.»-ի խմբագրութիւնը «P. Сл.»-ի թղթակցի տրամադրութեան տակ է դրել այն յօդուածի կարիկատուրան, որ լոյս տեսաւ երկուշաբթի օրը։

Յօդուածում ասված է.

«Համաշխարհային պատմութեան արատը կայանում է նրանում, որ անհամեմատ բացարձակ ճշմարտութիւնները ամենակատաղի կերպով հերքվում են։ Բէյլիսի դէմ սկսված մեղադրանքը լի է ներքին հակասութիւններով, կազմված չափազանց անշնորհք կերպով։ Իսկապէս՝ մեղադրեալների աթոռին նստել են ռուսական կուլտուրայի ստորին մակերևոյթը և ռուսական ռէժիմը»։

—

Պրագա.—Բացի կղերականից, չեխական բոլոր լրագիրները, բոլոր քաղաքագէտները և գրականագէտները միաբերան բողոք են արտայայտում Բէյլիսին ծիսական սպանութեան մէջ մեղադրելու դէմ։

Հրէական ընկերութիւնները և լրագիրները, որոնք լոյս են տեսնում գերմաներէն և չեխերէն, խորին շնորհակալութիւն են յայտնում ճնշված չեխ ժողովրդին, որ հանդէս է գալիս ի պաշտպանութիւն արդարութեան մի ուրիշ ճնշված ժողովրդի վերաբերութեամբ։

—

Բեռն.—Խորին յուզմունքի տոնով խօսում է շվէյցարական մամուլը Բէյլիսի գործի մասին։

Բոլոր լրագիրները միաբան են այն հարցում, որ «Միջնադարեան հնոտիքի հետ խաղալը 20-րդ դարում վայրենի է և վատ նպատակով է»։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ

—

Ստացանք բժշկապետ Յովհ. Բ. Գասպարեանից 100 ր.։ Ուրեմն նախկին 177 ր. գումարի հետ («Մշակ» № 216) ունենք այժմ 277 րուբլի։

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Թիֆլիսի բորսային կոմիտէտի կողմից յօբելեանական տօնախմբութիւններին մասնակցելու համար ընտրված են կոմիտէտի փոխ-նախագահ Ս. Մանուէլեան, քարտուղար Գ. Խատիսեան և Բ. Բօղդանեան։

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԵՒ ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

I

Սուրբ Մեսրոպ ամենահանճարեղ հայն է և մեծագոյն բարերարը հայոց։ Նրան ենք պարտական մենք մեր ազգի ուրոյնութեամբ. Նա հայ ժողովրդի փակ միտքը բացեց, ձեռքը գրիչ տուեց, եղաւ նրա առաջին ուսուցանողը. դարերի ընթացքում նա հայ ազգը ապրեցրեց, դժնդակ օրերին նրան գուրգուրեց, գեղեցիկ ապագայի յոյս ներշնչեց։

Հայոց ազգի գոյութեան ամբողջ պատմութիւնը բաժանվում է երկու մասի. առաջինը՝ Հայկից, Արամից մինչև ս. Մեսրոպ, այսինքն հայ ազգի սկզբնաւորութիւնից մինչև գրերի գիւտը։ Երկրորդ շրջանը սկսվում է ս. Մեսրոպի գիւտից և տեւում է մինչև մեր օրերը։ Այս երկու շրջանները մեր պատմութեան ոգին են պարունակում ամբողջապէս։ Ս. Մեսրոպ իր գիւտով, որպէս մի հսկայ, կանգնած է երկու շրջանների մէջ տեղը և իր անձով բնորոշում է ամբողջ երկրորդ շրջանը։

Մինչև ս. Մեսրոպ մեր ազգը անկազմակերպ, անկայուն ցեղերի մի հաւաքոյթ էր, յայտնի միայն իր ֆիզիքական ոյժով և յաղթանակներով. գիտակցութիւն իր գոյութեան, մտաւոր վսեմութիւն և հոգեկան ճշմարտութիւնների որոնումներ մենք չենք նկատում առաջին շրջանում։ Ճիշդ է, դեռ Քրիստոսից առաջ եղել են բանաւոր գրականութեան նմուշներ, դեռ ևս առաջին դարերում Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները շրջեցին Հայաստան և նոր կրօնի կայծերը տարածեցին, 303 թւին ս. Գրիգոր Լուսաւորիչը հայ ազգը նոր կատարեալ կրօնով մկրտեց, բայց այդ բոլորը մնաց խորթ՝ ժողովրդին. ազգը միայն երեսանց ընդունեց նոր դաւանանքը, չըմբռնելով էութիւնը։ Հայ ազգը չունէր իր սեփական գիրը և օգտվում էր օտար նշանագրերով. բայց դրանք, ինչպէս և բևեռագրերը, բաւականութիւն չէին տալիս հայոց լեզուի հնչիւնները իսկութեամբ արտայայտելու. յունաց և ասորոց այբուբենների մէջ չը կային մի շարք տառեր՝ հայկական հնչիւններին համապատասխանող։ Մեր երկիրը իր խայտաբղետ աշխարհագրական դիրքով, լեռնային քամիներով և օդի տարբեր ճնշմամբ հայի բերանն էր դրել այնպիսի հնչիւններ, որոնցից զուրկ էին հարևանները (ր, ռ, ծ, ճ, ց, ձ, չ, ջ, խ, ղ)։

Այսպիսով մինչև ս. Մեսրոպ հայ ազգը գոյութիւն ունէր՝ առանց այդ գոյութեան գիտակցութիւնը ունենալու. և եթէ այդպէս շարունակվէր, եթէ չը ծնվէր ս. Մեսրոպ և գրեր չը տար հայերին, հայ ազգը մինչև այս օրվան դժուար թէ հասնէր. նա կը ձուլվէր հարևանների հետ, կը կորցնէր իր ազգային անհատական ուրոյնութիւնը։ Բայց ս. Մեսրոպ խափանեց այդ անխուսափելին, հայի միտքը բացեց, Ս. Գիրքը հայերէն թարգմանեց, նոր դաւանանքի աշխարհահայեացքները ժողովրդականացրեց, հայերին գիտակցութիւն տուեց, սովորեցրեց կռուել իր սեփականի պահպանման համար, առաջ բերեց անվեհեր Վարդանների դիւցազնածու սերունդը, որ ընդունակ եղաւ տոկուն պայքարների, ինչպէս օրինակ 451 թւի գաղափարի և հաւատի համար մղված պատերազմը, որ ընդհանրապէս հայոց ամբողջ մարտիրոսութեան պատմութիւնն է ապացուցանում։

Երկրորդ շրջանը, որ տեւում է ցայսօր, իբր դարագլուխ պսակված է ս. Մեսրոպ Մաշտոցի նուիրական անունով և նրա գիւտով։ Հայոց Վռամշապուհ (նախավերջին Արշակունեան) թագաւորի օրով, ս. Սահակ Պարթևի կաթողիկոսութեան միջոցին, մի նախկին պալատական պաշտօնեայ, ապա խիստ ճգնաւորական կենցաղով յայտնի ս. Մեսրոպ գտնում է հայոց տառերը։ Քիչ բան գիտենք նրա կեանքի մասին. Տարօնի Հացեկաց գիւղիցն էր նա։ Այստեղ պէտք է ընդգծել, որ ս. Մեսրոպը գիւղացի է եղել և հայ գիւղն է ծնել ամենահանճարեղ հային։

Իբրև քարոզիչ նա շրջում է գաւառները, ծանօթանում է իրականութեան և իր լուսաւոր մտածողութեամբ ըմբռնում է, որ հայ ազգի համար քրիստոնէութիւնից էլ կարևորը նրա լեզուն է և սեփական նշանագիրը. և ս. Մեսրոպ վերջ դնելով քարոզչական գործունէութեան՝ առանձնանում է և տառերի ստեղծման փորձեր է անում։ Շատ է դեգերում, շատ դիմումներ է անում, բայց լրիւ այբուբենն չէ գտնում պատրաստի. Դանիէլ ասորու տուածը թերի էր։ Երկար աշխատանքից յետոյ ս. Մեսրոպի յոգնած հայեացքը նշմարում է պատի վրա գծագրված պակաս տառերը. այդպիսով նա գտնում է երկար որոնածը, գտնում է գերմարդկային ջանքերով։ Ս. Մեսրոպի այդ գիւտը վեհագոյն պատկառանքի է արժանացել մեր պատմութեան մէջ. նա գտել էր գիրը, որ ըստ Մաքս Միւլէրի՝ «ամենամեծ եւ ամենասքանչելին է մարդկանց ստեղծագործութիւններից»։ Գիրը մինչև այժմ էլ իբր սրբութիւն է պաշտվում վայրենիներից. նրանք կարծում են, որ թղթի կտորը խըզբզած գրերով՝ կարող է խօսել, խօսեցնել և լսել։

Հայոց գրերի գիւտը եղաւ հինգերորդ դարի սկիզբներին, 404, 406, 412—13 թւականներին. որոշապէս յայտնի չէ թէ երբ. դրա համար էլ 1904 թւին լոյս տեսան մի քանի հրատարակութիւններ գրերի գիւտի 1500-ամեակի լրանալու առիթով, իսկ վերջին տարիների ուսումնասիրութիւնները ապացուցեցին, որ տառերի գիւտը եղել է 412—13 թւականներին, որի 1500-ամեակը լրացաւ այս տարի։ Տառերի գիւտից յետոյ սկսվեց մտաւոր գործունէութեան եռանդուն շրջան. հիմք դրվեց հայոց գրաւոր գրականութեանը, և ամենից առաջ թարգմանվեց սուրբ գիրքը։ Սա ահագին պատմական նշանակութիւն ունեցող մի փաստ է. մենք լիակատար գիտակցութեամբ կարող ենք պարծենալ, որ հայերէն լեզուով ս. Գիրքը թարգմանել են ս. Սահակ և ս. Մեսրոպ հինգերորդ դարի սկիզբներում, մինչդեռ միւս ազգերը ուշ են արժանացել այդ բաղդին. գերմաներէն լեզուով՝ թարգմանված է 15-րդ դարում (Մարտին Լութեր). ֆրանսերէն լեզուով՝ նոյն դարում (Կալվինը). ուրեմն մեզանից տասը դար ուշ. չեխերէն՝ 13-րդ դարում (Եան-Յուս) և սլաւոներէն 9-րդ դարում (Կիրիլ և Միֆօդիյ)։

Միայն թարգմանութիւններ չեն լինում գրերի գոյութեան առաջին դարում. ծընվում են ինքնուրոյն գրողներ։ Հինգերորդ դարը մեր մատենագրութեան պատմութեան մէջ կոչվում է ոսկէ դար, երբ ապրել են Եզնիկ Սքանչելին, Կորիւնը, Եղիշէն, Ագաթանգեղոսը, Մովսէս Խորենացի քերթողահայրը և այլն։

Հինգերորդ դարից սկսած մեսրոպեան գրերն են հայ ազգին ապրեցնողը։ Գիտէք, որ դեռ սուրբ Մեսրոպի կենդանութեան օրօք՝ 428 թւին վերջացաւ Արշակունեաց թագաւորութիւնը. Հայաստանը ենթարկվեց հարևան պետութիւններին, բաժան-բաժան եղաւ, արիւն աւերածի դարեր եկան ու գնացին, թագաւորներ հաստատվեցին և գահեր խորտակվեցին. 36 միլիոնի չափ ազգաբնակութիւնը սպառվելու չափ ջնջվեց, երկիրը քարացաւ բարբարոսների ձիերի սմբակների տակ, բայց խաւարի և զուլումի մէջ անգամ չը մարեցին կենդանութեան կայծերը, չէին ջնջվում մեսրոպեան տառերը։ Խուլ անկիւններում, մոխիրների տակից կրակն է յանկարծ ակնյայտում, դըպրոց է բացվում, մարդիկ գիշեր ու ցերեկ գիրք են կարդում, ս. Մեսրոպի գիրն են գրում։ Միշտ այդ գիրն է եղել հայ ազգի անկախ, ինքնուրոյն և յատուկ պահպանողը։ Ահա 1500 տարի է, ինչ հայ ազգը ս. Մեսրոպով է շնչում։

II

Մեսրոպեան գիրը իր նշանակութիւնը աւելի մեծացրեց, երբ Յովհաննէս Գուտտենբերգ տպագրական մամուլը գտաւ 1443 թւին։ Գերմանացի հասարակ արհեստաւորը իր գիւտով ամբողջ մարդկութեան բարերարը կոչվեց. նա նպաստեց և հայ մտքի զարգացմանը։ 1512 թւին Վենետիկում, ապա Ամստերդամ, Մարսէլ, Հռոմ, Կ. Պօլիս և այլ քաղաքներում հիմնվում են հայկական տպարաններ։ Մեսրոպեան գիրը հազարաւոր և միլիօնաւոր օրինակներով տարածվում է ժողովրդի լայն խաւերում. մատչելի են դառնում գրքերը ընթերցասէրներին. ամրանում է հայի միտքը, վերջանում է ձեռագիրների արտագրման եգիպտական ծանր աշխատանքը։

Առաջին հայկական տպարանները հիմնըվում են հեռու բուն հայրենիքից. և այս երևոյթը ունի իր բարդ պատճառները. Նախ այն, որ Հայաստանը հեռու էր Գուտտենբերգի գիւտի վայրից. մինչև Գերմանիայից մամուլը գար Փոքր-Ասիա, աւելի երկար ժամանակ էր պէտք, քան Վենետիկ, Մարսէյլ, Ամստերդամ քաղաքները. և ապա գլխաւոր պատճառը, որ իր ներկայութեամբ անտես է անում միւս մանր և նուազ նշանակալից պատճառները—դա Հայաստանի քաղաքական դրութիւնն էր, երկրի քարուքանդ վիճակը։ Նոր խուժած թաթարները գաղանացած ամայացրել էին Հայաստանը, ուր չը կար կեանքի ամենատարրական ապահովութիւն։ Պարզ է, որ մի կուլտուրական նորամուծութիւն, որպիսին էր տպագրութիւնը, կարօտ էր երկար լարված հանգիստ աշխատանքի, և այդ չէր կարող Հայաստանում զարգանալ, ուր չը կար կեանքի ամենատարրական ապահովութիւնը։ Եւ հայ ուսումնասէրը գնում է հեռու, Վենետիկում և այլ քաղաքներում հայ լուսամիտ վաճառականների օգնութեամբ հայկական տպարաններ հիմնելու, տպագրված հատորները հայրենիք ուղարկելու։ Այստեղ ես չեմ յիշի հայկական տպարանների կազմակերպողների անունները, որոնք ծածկված են համեստութեան վարագոյրի տակ. գլխաւորը անունները չեն անձնաւորութիւնները. էականը նրանց թողած գործն է, որի 400-ամեակը այժմ տօնվում է։

Ուրեմն միացել են երկու մեծ յօբելեաններ. մեսրոպեան տառերի գիւտի 1500-ամեակը և հայ գրքի տպագրութեան 400-ամեակը։ Անզուգական յօբելեաններ. անցեալի ցնծագին վերյիշման միջոցին մենք հեռատես հայեացքով աչքի կանցնենք ամբողջ անցեալը. նորելուկներին կը ծանօթացնենք հին դէմքերին, կը չափենք մեր ոյժերը, ի ցոյց կընենք մեր հեռաւոր եղբայրներին, կը համոզվենք մեր ազգային ամբողջութեան կենսունակութեանը և գալիքի մասին կը խորհենք, ապագայի գունաւորումը կորոշենք։

Եթէ ճիշդ է, որ ապագան հիւսվում է անցեալի և ներկայի գումարումից, ապա մենք պէտք է 1500 տարվայ անցեալը ուսումնասիրենք, ներկան ըմբռնենք և ապագայի ստեղծմանը համարձակ դիմենք։ Այս գործունէութեան ամբողջ շրջանում մեզ օգնութեան են գալու սուրբ Մեսրոպ և Գուտտենբերգ. նրանք և ղեկավարելու են մեր գործողութիւնները։ Ուրեմն ս. Մեսրոպ և Գուտտենբերգ հայերիս զարգացման գըլխաւոր ազդակներն են եղել և կը լինեն ապագայում։

Խորին երախտագիտութեամբ յաւերժ յիշատակ երգենք այդ երկու հանճարներին։

Գ. Տէր-Ռուբինեան

ներով, քշում էին ականջներից, եղունգները հանում էին մախերով, խանձում էին մօրուսները, բռնում էին վառած մոմերը քթածակներին, որպէսզի հուր շնչեն։

—

Ռուսական հրէաներին մեղադրելը

Սուտ առասպելը մուտք գործեց և Ռուսաստան։

Մինչև XIX դարը հրէաներին ծիսական սպանութիւնների մէջ մեղադրելը առաջ եկաւ գլխաւորապէս Լեհաստանում։

Բայց շուտով անցաւ և Ռուսաստան։

1805 թ. գործ յարուցվեց Վէլիժում երեխայ Նիկիտինին սպանելու մասին։

Սակայն կասկածվող անձերի դէմ փաստեր չը լինելու պատճառով գործը «յանձնվեց Աստուծոյ կամքին»։

1811 թ. Վիտէբսկի գ. Տօմիշէվսկայա կալուածատիրուհու գիւղում նոյնպէս մի երեխայի սպանութեան առիթով կատարված քննութիւնը ոչինչ չը յայտնագործեց։

Վերջապէս, 1816 թ. Գրօդնայում Ադամօվիչևա աղջկայ սպանութեան առիթով հրատարակվեց Բարձրագոյն հրաման 1817 թ. փետրվարի 28-ին։

—

Ալեքսանդր I կայսրի հրամանը

«Հրէաների դէմ անհիմն կասկածելու առիթով, թէ իբր նրանք բաղարջի մէջ գործ են ածում քրիստոնեայի արիւն, յաճախակի լեհական թագաւորութեան ժամանակ նրանց մեղադրում էին քրիստոնեաների երեխաներին սպանելու մէջ. բայց կատարված քննութիւնները այդ սուտը չը հաստատեցին։ Լեհական նախկին թագաւոր Սիգիզմունդ Աւգուստոսը, ի նկատի ունենալով այդօրինակ անհիմն չարախօսութիւնները, 1564 թ. օգ. 9-ի և 1566 թ. մայիսի 20-ի իր հրովարտակներով արգելեց մեղադրել հրէաներին առանց որևէ հիմքի՝ քրիստոնեայի արիւն գործածելում, գիտենալով Ս. Գրքից, որ հրէաները դրան կարիք չունեն։ Իսկ վերջին ժամանակները, այսինքն 1763 թ. մարտի 21-ին, պապի նուիրակը հրէաների գործի առիթով գրում էր.

«Եւ դեռ վերջերս հռոմէական գահը քննեց բոլոր այն հիմունքները, որոնց վրա կառուցված է այն կարծիքը, թէ հրէաները պէտք ունեն մարդկային արեան՝ իրանց բաղարջը պատրաստելու համար, բայց չը գտաւ բաւական պարզ ապացոյցներ, որոնք բաւական լինէին այդ նախապաշարմունքը ճշդելու ընդդէմ հրէաների՝ այնպէս, որպէս զի կարելի լինի դրանց վրա հիմնված՝ յայտարարել նրանց մեղաւոր այդօրինակ յանցանքի մէջ, և ուստի կանօնաւոր չը գտաւ ճշդել այդ կասկածը»։

«Այդ անհիմն մեղադրանքների առիթով, որոնք տարածվեցին Լեհաստանին մերձ գտնվող ռուսական նահանգներում ևս, Նորին Կայսերական Մեծութիւնը, ուշադրութեան առնելով որ այդօրինակ զրպարտութիւնները առաջ ևս քանիցս հերքվել են անկողմնապահ քննութիւններով և թագաւորական հրովարտակներով, Բարձրագոյնս հրամայեց (ինձ*) յայտարարել բոլոր նահանգապետներին Միապետի կամքը, որպէս զի այսուհետև հրէաները չը մեղադրվեն քրիստոնեաների երեխաներին մահացնելու մէջ առանց որևէ ապացոյցի, սոսկ ենթադրութեամբ, որ իբր նրանք կարիք ունեն քրիստոնէական արեան. բայց եթէ մի որևէ սպանութիւն կասկածով վերագրվի հրէաներին, թէ իբր նրանք այդ գործել են քրիստոնէական արիւն ստանալու համար, այն ժամանակ կը նշանակվի քննութիւն օրինական հիմունքով ճիշդ այնպէս, ինչպէս դատվում են միւս դաւանութիւններին պատկանող մանկասպան յանցագործները»։

—

Ռուսական հրէաներին մեղադրելը XIX դարում

Ալեքսանդր I կայսրի հրամանը վերջ չը դրեց, սակայն, հրէաների դէմ սկսված մեղադրանքներին։ Սակայն ծագող մեղադրանքները վերջ ի վերջոյ երևում էին անհիմն։

Պետական Խորհուրդը պակասաւոր համարեց փաստերը ընդդէմ այն անձանց, որոնք կասկածվում էին 1823 թ. Վէլիժում երեխայ Եմելիանովին սպանելու մէջ։ Ոչինչ չը տուեց քննութիւնը 1826 թ. Վարշավայում ծագած գործի առիթով։ Նոյնը և 1827 թ., 1833 թ., 1844 թ.։ Մեղադրվող հրէաները արդար ճանաչվեցին։

—

1890-ական թւականները

Յաճախ մեղադրանքներ էին առաջ գալիս ծիսական սպանութիւնների առիթով 90-ական թւականներին։ 1893 թ. Նիժնի-Սօմօվում, Թիֆլիսում, Սարատօվում, Օստրօվում, 1894 թ. Սմօրգօնիում, 1895 թ. Սեմիպալատինսկում, Իրկուտսկում, 1896 թ. Նօվինկիում, 1897 թ. Պերէյասլավլում։

Այդ բոլոր մեղադրանքները հիմնված էին բացարձակ թիւրիմացութիւնների վրա։ Երեխաների անյայտանալուց յուզված՝ ծնողները վերագրում էին նրանց անյայտանալը հրէաներին, որոնք իբր թէ գողանում են երեխաներին ծիսական նպատակով։

Բայց պարզվեց, որ հրէաների փոխարէն յափշտակել է հայրը (Սարատով), կամ երեխան վերջում գտնվեց ազգականների մօտ (Սէմիպալատինսկ), կամ թէ երեխային յափշտակել են մուրացկանները, որոնք սովորեցնում են նրան մուրալ (Նօվինկի)։

Պատահել է, որ սուտ լուրը տարածել է մայրապանը (Պերէյասլավ—Զալէսկի), կամ երեխային գտել են երկաթուղային կայարանում հանգիստ կերպով շոգեմեքենային նայելիս (Սմօրգօն)։

Եղել են և կուրիօզներ։

Թիֆլիսում մի վրացուհի յայտնեց, թէ լսեց նկուղից եկող երեխայի ձայն։ Տան մէջ գտնվում էր հրէական մսի խանութ։ Այդ բաւական էր, որպէսզի մեղադրանք ծագէ հրէաների դէմ։ Բայց երևաց, որ վրացուհին նկուղում փակված հորթի մկկոցը շփոթել էր երեխայի լացի հետ։

1906 թ. Վիլնայում մահափորձ կատարվեց Վինդէնցիա Գրուզինսկայայի կեանքի դէմ։

Մեղադրվող Բլօնդէսը արդարացաւ։

Սա Ռուսաստանում հրէայ ժողովրդին մեղադրելու վերջին գործն էր։

Իսկ այժմ մէջտեղ եկաւ Բէյլիսին մեղադրելը։

(«Р. Утро»)

---

*) Այս հրամանը ստորագրել է իշխ. Գօլիցինը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Լաց ու կոծի օրեր

Կարս, 24 սեպտ.

Կարսում գոյութիւն ունեն 11 թաղական պետական դպրոցներ, քաղ. դպրոց, աղջկանց գիմնազիա, ռէալական դպրոց և Մարիամեան դպրոց։ Բացի այս պետական դպրոցներից՝ կան և հայ-լուսաւորչականների և հայ-կաթօլիկների ծխ. դպրոցներ։ Այս բոլորի մէջ սովորում են մօտաւորապէս 3500 երկսեռ մանուկներ։ Չը նայելով որ Կարսում գոյութիւն ունեն 17 օրինաւոր դպրոցներ, բայց և այնպէս շատերը մնում են փողոցում, կամ սովորում են տներում կամ պատրաստվում են զանազան ուսուցիչների մօտ։

Օգոստոսի 25-ին բացվեցին դպրոցների դռները։ Թափվեցին ամեն տեղ բազմաթիւ խնդրատուներ իրանց երեխաներով։ Սկըսվեցին վերաքննութիւնները և նոր մանողների քննութիւնները։ Ողորմելի ծնողները սրտատրոփ սպասում էին դռներում ուրախ լուրերի։ Վերջացան քննութիւնները, յաղթանակ տարան լաւ թւանշան ստացողները և ընդունվեցին դպրոց, իսկ բազմաթիւ վատ թւանշան ստացողները իրանց անբաղդ ծնողների հետ ողբալով տուն վերադարձան։ Փակվեցին դպրոցների դռները շատերի առաջ, և ահա այդ ժամանակ սկսվեց ծնողների ու երեխաների լաց ու կոծը։

— Ի սէր Աստուծոյ, պ. վարժապետ, մի խղճանք արէք. երեխաս մեղք է. ձեր տանեմ։

— Ոչ մի խղճանք չը կայ. դասարանի որոշեալ չափից մի քանի հոգի էլ աւելի ենք ընդունել. տեղ չը կայ։

— Ես մեր տանից մի աթոռ կը բերեմ, թող նրա վրան նստի։

— Այդ անկարելի է,—ժպտալով պատասխանում է ուսուցիչը։

Լաց ու կոծի հետ սկսվում են սուր վիճաբանութիւններ, աղաչանքներ, բայց բոլորը զուր։

Զարմանալի երկիր է. չը նայելով տարվայ սարսափելի երաշտութեան, բայց և այնպէս սունկի պէս աճում ու բազմանում են երեխաները...

Սարգիս Տէր-Մելքիսեդեկեան

—

Անմտածված մի կարգադրութիւն

Հին-Նախիջևան, 26 սեպտ.

Անցեալ անգամ ես իմ փոքրիկ թղթակցութեան մէջ շօշափել էի մեր փոխատուական վարկի ընկ. մէջ տեղի ունեցող ապօրինի գործերը։ Այդ հաստատութեան վարչութեան նախագահը ամսիս 23-ից մինչև 30-ը դադարեցրել է՝ ինքնակամ կերպով՝ ընկերութեան բանկի մէջ մուրհակների զեղչումը։

Ով գէթ մի անգամ գործ է ունեցել որևէ բանկային հաստատութեան հետ, նա լաւ կիմանայ, թէ ինչ է նշանակում գէթ մի օրով դադարեցնել մուրհակների զեղչումը։ Այդ նշանակում է առևտրականին նիւթական և բարոյական մահ պատճառել, անանկացնել, վարկից զրկել, մուրհակները բողոքի թողնել նօտարին։

Այս տեսակ հանգամանքները ուղղակի տնաքանդութիւն են վաճառականների համար։ Այն մարդիկ, որոնք ոչ մի վարկ, կրեդիտ չունեն, չեն էլ կարող իմանալ վարկի արժէքը։ Եւ այդ բոլորը արվում է Թուրք անդամների վրա ճնշում գործ դնելու համար, իսկ Թուրք անդամները ընկերութեան անդամների ընդհանուր Թւի $^2/_3$-ն են կազմում։ Որքան խելացի են այդպիսի անմիտ քայլերը, Թողնում եմ դատել ընթերցողներին։ Ա. Ե.

Հ. ԵՐԱՄԵԱՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Թիֆլիս, 3 նոյտ.

Ամսիս 1-ին Թիֆլիս է եկել Վանի Երամեան վարժարանի հիմնադիր-տնօրէն Համբարձում Երամեանը (աչազուրկ)։ Նա իբրև Վանի պատգամաւոր մասնակցելու է Էջմիածնում տօնվելիք համազգային յոբելեանական հանդէսներին։

Հ. Երամեանը, այդ բազմաչարչար, աչազուրկ կրթական-հասարակական գործիչը, 35 տարիներ շարունակ հիմնել և ղեկավարում է միջնակարգ մի դպրոց՝ Թիւրքական իրականութեան դժնդակ պայմանների մէջ. այդ դպրոցը, Երամեան վարժարանը, իբրև լուսատու մի փարոս լոյս է սփռել Թիւրքահայկական մութը հորիզոնների տակ, և սնուցել ու դաստիարակել Վասպուրականի ուսումնածարաւ մանուկները ի նպաստ հայ հասարակութեան։

Երամեան վարժարանը Հ. Երամեանի տառապագին-յամառ տոկունութեամբ միշտ բարձր է եղել կանգնած իր շրջապատի այլ դպրոցներից, միշտ հարազատ ու օգտաշատ, միշտ բարձրանալու ու բարգաւաճելու հետամուտ։

Համբ. Երամեանը, որ իր առողջութիւնը և ամբողջ նիւթական կարողութիւնը զոհ է բերել իր այդ փայփայած, միակ մխիթարութիւնը եղող հիմնարկութեան, այժմ Կովկասում գտնվելով յենված է կովկասահայ ազգայինների բարեացակամութեան վրա, որ քանիցս անգամ նեղ ճգնաժամերին օգնութեան է հասել իր դրամական նուէրներով, մտադրութիւն ունի ձեռնարկութիւններ անել, իր միջնակարգ 11-ամեայ դպրոցը կոլէժի աստիճանին բարձրացնելու, ճոխացնելու դպրոցական գրադարանը և դպրոցը ընդմիշտ տնտեսապէս ապահովելու, որ մաքառել կարողանայ Թիւրքահայ իրականութեան մէջ արդէն գոյութեան իրաւունք ստացած, մեր ազգութեան համար վտանգաւոր և օտարացնող ու այլասերող եւրոպական կոլէժների ու դպրոցների դէմ։

Ռ. Իսկէնդէրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ծառայական գործերով Գանձակի նահանգը մեկնեց երկրագործութեան գլխաւոր կառավարչի կովկասեան լիազոր Շաշկովսկին։

◆ Սկրա կայարանից եղբ. Աւսարգսեանների այգիներից Թիֆլիս է բերված 570 պուդ Թարմ խնձոր, որոնք պահվում են սպանդանոցի սառցային մասում։ Սպասվում են դարձեալ մեծ քանակութեամբ դեղձ ու տանձ, որոնց մի մասը կը վաճառվի տեղիս շուկայում, իսկ միւս մասն ուղարկվելու է Պետերբուրգ և Մոսկվա՝ սառցային գնացքով։

◆ Կովկասեան բժշկական ընկերութեան նիստում նոյտ. 1-ին, ի Թիւս այլոց, բժ. Տուշինսկին մի ռեֆերատ կարդաց, որով ապացուցեց, Թէ նէօսալվարսանը բարերար ազդեցութիւն է գործում ճահճային դողերոցք հիւանդութիւնը բուժելիս։

◆ Համաձայն ոստիկանական տեղեկութիւնների, հոկտեմբերի 2-ի ժամը 2-ի մօտերը նորակոչ զինուորները, Թւով 100, նստելով էլեկտրաքարշի վագոնները Վօկզալնայա փողոցի մօտ, սկսեցին աղմկել, պահանջելով կոնդուկտորներից տանել իրանց ձրիաբար, որի պատճառով կոնդուկտորների և մի քանի նորակոչների միջև, որոնք արբած էին, սկսվեց ծեծուջարդ, իսկ երբ գնացքները մօտեցան էլեկտրաքարշի գրասենեակին, նորակոչները սկսեցին անկարգութիւններ անել, ծեծելով կայարանի պետին՝ Ժորդանիային, որի համար հանդէս եկան կոնդուկտորները և վատմանները։ Նորից երկուստեք սկսվեց ծեծուջարդ, որի ժամանակ աննշան ջարդուածքներ ստացան հինգ կոնդուկտոր և վատման։ Բացի դրանից՝ նոյն օրը նորակոչները ընդհարվեցին էլեկտրաքարշի վատմանների հետ նաև Վէրայի զառիվայրում, ուր վէրքեր ստացան երեք կոնդուկտոր։ Էլեկտրաքարշի գրասենեակի մօտից պատահմամբ անցնող քաղաքապահ ոստիկանը, կամենալով ցրել ամբոխը, կրակեց ատրճանակից օդում, ոչ ոքի չը վնասելով։ Անկարգութիւն անող նորակոչներից ձերբակալված են Նիկոլայ Ամիրաձէն, Մկրտիչ Մարտիրոսեանը, Իվան Ասաշվիլին, Ստ. Անդուլօվը և Նիկ. Մեսրէվէլին, որոնք և ենթարկվում են պատասխանատուութեան։

◆ Միևնոյն օրը Գօլովինսկի պրօսպէկտի վրա էլեկտրաքարշի վագոնը լցված նորակոչներից, որոնք ստիպում էին վատմաններին ձրի տանել իրանց, Թաղական վերակացուն 6 հեծեալ ոստիկանների աջակցութեամբ ձերբակալեց նորակոչ զինւոր Արշակ Ալ. Յովհաննիսեանցին, որ աւելի էր անկարգութիւն անում։

◆ Երկուշաբթի օր, հոկտեմբերի 7-ին Թատերաշրջանի բացման առԹիւ տրվելիք «Հին Աստուածներ» պիէսի համար մասնագէտ երաժշտագէտ խմբապետի ղեկավարութեամբ պատրաստված է երկսեռ անձերից ստուար երգեցիկ խումբ։

◆ Մեզ խնդրում են հաղորդել, որ այսօր, նոյտ. 4-ին, Հայ Դրամ. Ընկ. գրասենեակում երեկոյեան ժամը 2-ին նշանակված է հայ դերասանների միութեան ընդհանուր ժողովը։

◆ «Россія»-ն հաղորդում է, որ անդրկովկասեան երկաթուղիների Կարսի ճիւղի նախնական հետազօտական աշխատանքները աւարտված են։ Ըլկրորդ գծի կառուցումը սկսվելու է 1914 Թւից։

◆ Կ. Պօլսում Լևոն Լարենց ձեռնարկել է հրատարակել անգլիացի հեղինակ Լինչի ծանօթ երկհատոր «Հայաստան» աշխատութեան հայերէն Թարգմանութիւնը։ Արդէն տպվել է առաջին հատորը, որն ստանալու համար պէտք է դիմել Թարգմանիչ Լևոն Լարենցին, Կ. Պօլիս, Բաբը Ալի Ջադդէսի, Ասատուրեան ապարան։ Գինն է 3 ր., ճանապարհածախսով։

◆ Հոկտեմբերի 2-ին Ղազախի գաւառի բնակիչ Ալար Հասան-օղլին՝ 26 տարեկան, որ տառապում է հոգեկան հիւանդութեամբ, նետեց իրան կոյրերի հիւանդանոցի 3 րդ յարկից և ստացաւ ծանր ջարդւածքներ։ Քաղաքային հիւանդանոցում նա ուշքի չը գալով մեռաւ։

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ, Թէյատուն պահող Ալի Աբդուլ-օղլին, հասցէների սեղանի կանոնները խախտելուն համար, ենթարկվում է 100 ր. տուգանքի կամ մի ամսով բանտարկութեան։

◆ Ռուսաց սինօդին կից գտնվող տնտեսական մասնաժողովը տեղեկութիւն ստացաւ Վրաստանի էկզարխութեան վարչութիւնից, որ Փօթիի տաճարի կառուցման համար հանգանակված գումարների մեծ մասը վատնվել է։ Սինօդը յատուկ պաշտօնեայ է ուղարկել այդ գործը քննելու և տաճարի կառուցման հարցը պարզելու համար։

◆ «.Т Л.»-ին հեռագրում են Շուշու գ. Նօվրուզլու գիւղից, որ անյայտ անձինք զինված յարձակւում գործեցին Տէր-Պօղոսեանի օղեգործարանի վրա։ Վիրաւորված են երեք, սպանված են երեք մարդ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒՍՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

Այսօր, ուրբաԹ, տեղի կունենայ Գրական-Գեղարւեստական Սալօնի 8-րդ տարեշրջանի բացումը։

Հանդիսաւոր jour fixe-ը կը նուիրվի «Рус. Вѣд.» լրագրի յիսնամեակին։

Այս երեկոյեան, ինչպէս միշտ, հրաւիրված են արուեստի, գիտութեան, գրականութեան և մամուլի ներկայացուցիչներն իրանց ընտանիքներով և «Աղբիւր-Տարազի» բաժանորդները։

Հանդէսը կը բացվի մի ճօնով, ուղղված՝ համայն ռուսական ինտելիգենցիայի սիրելի օրգան՝ յոբելեար «Рус. Вѣд.»-ին, ապա կը լինի տեսութիւն այդ լրագրի յիսնամեայ գործունէութեան և զրոյց սրա շուրջը։

Գրական-երաժշտական մասում հանդէս կը գան նոր դէմքեր, ինչպէս և սովորական այցելուների մէջ կը լինեն նոր հիւրեր։

Սկիզբը երեկոյեան ժամը $8^1/_2$-ին։ Նրանք, որոնք մի որևէ պատճառով հրաւիրագիր այս սեզօնի համար չեն ստացել, Սալօնի վարչութեան կողմից խնդրվում է ներկայացնել նախորդ տարվայ սեզօնային հրաւիրագիրը և փոխարէն ստանալ նորը ամբողջ այս սեզօնի համար։ Ն.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 1 նոյտ.

Երկար ժամանակ բացակայելով Թիֆլիսից, միայն այս վերադարձիս օրերին հնար ունեցայ տեղեկանալու, որ իմ հանգուցեալ ամուսնու՝ Գր. Վանցեանի աշխատութիւնը՝ «Նախահայ լեզուի քերականութիւնը» վերնագրով, ուղարկված Իզմիրեանց գրական յանձնաժողովին, մրցանակաբաշխութիւնից դուրս է մնացել։

Սրանով գալիս եմ յայտնելու Իզմիրեանց գրական յանձնաժողովին, որ իմ հանգուցեալ ամուսնու՝ Գր. Վանցեանի վերև յիշածս աշխատութեան ձեռագիրը ուղարկվի ինձ հետևեալ հասցէով. Петербургъ, Поварской переулокъ, № 12, кв. 1. Марьѣ Арсеньевнѣ (Ванцянъ) Мардановой.

Կ. Պօլիս քանիցս յղած նամակներիս պատասխանը չը ստանալուս համար է որ դիմում եմ խմբագրութեանդ։

Խնդրում եմ միւս Թերթերին արտատպել այս նամակս։

Մ. Վանցեան-Մարդանեան

—

Գետաբեկ, 26 սեպտ.

«Հովիւ» շաբաթաթերթի 37-րդ համարում (սեպտ. 9-ին) Ա. Ս.-ն Զարեքայ վանքի շինութեան և անտառների դրութեան նկատմամբ ի միջի այլոց գրում է.

«Երևակայեցէք, սիրելի ընթերցող, այդ վանքը իր շրջապատի անտառներով հանդերձ յանձնված է եղել ժամանակին Թիֆլիսի Թեմակալ առաջնորդի կողմից մի աշխարհականի տեսչութեան տակ, աշխարհականի, որը՝ հեռու Գանձակում նստած՝ դիտել է և երևի այժմ էլ դիտում է իր մատների արանքներով այդ վանքի և կալուածների վրա, ստանալով միևնոյն ժամանակ իր այդ չարած հսկողութեան համար չաղ ռոճիկ։

«Թէ անտառի և Թէ վանքի այս ողբալի վիճակի մասին կազմեցի տեղեկագիր և իմ դիտողութիւններովս նոյն Թւի (1910 Թ.) յուլիսի 7-ի № 63 յայտարարութեամբ ներկայացրի Էջմիածնի սինօդի տնօրէնութեան»։

Երևի սինօդը հետազօտած և քննած կը լինի Ա. Ս.-ի № 63 յայտարարութիւնը և Զարեքայ վանքն ու նրա անտառները բարւոք վիճակի մէջ գտած։

Սինօդի տնօրէնութեամբ, ինչպէս պատմում են, այս օրերս վանքերի կալուածների գլխաւոր կառավարիչ Լևոն բէկ Տէր-Աւետիքեանը եկել է քննելու Զարեքայ վանքի կալուածների կառավարութեան ներկայ վիճակը (որ իր աւագ եղբայր Միքայէլի կառավարութեան տակ է)։ Ցանկալի է իմանալ, Թէ պատասխանատու-կառավարիչը որպիսի նախանձելի դրութեան մէջ է գտել վանքը իր հարուստ կալուածներով, անտառներով։

Զրոյցներին նայելով՝ նա ստուար գումարի արձանագրութիւն է կազմել Մօլլա Մամէդ Քերբալայ Սօյուն օղլիի վրա, վանքի անտառից ապօրինի ծառեր կտրելուն և պղնձահանքի գործարանի վրա ծախելուն համար։ Հետաքրքրական է իմանալ, Թէ Մօլլա Մամէդը այդ փայտեղէնները Զուլզադարօվների անտառի շուաքի տակ է մատակարարել գործարանին Թէ վանքի անտառի անուամբ։

Այս մասին ճիշդ վկայութիւն կարող է տալ միայն պղնձահանքի կառավարիչ պ. Երին։

Դիտող

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ռ. Դուռը պատուիրագրեց իր պատգամաւորներին ստորագրել պայմանագիր Յունաստանի հետ Թէկուզ անշահաւէտ պայմաններով, որովհետև Թիւրքիան ամենից առաջ կարիք ունի խաղաղութեան։

◆ Արտասահմանից վերադարձել է Պետերբուրգ կարնէջիի մասնաժողովի անդամ Միլիւկօվը, որ սոսկալի գոյներով է նկարագրում բուլղարների տանջանքները յոյների և սերբերի ձեռքով։

◆ «Н. В.»-ին Կ. Պօլսից հեռագրում են, որ օսմանեան իշխանութիւնները արգելեցին Ռուսաստան մեկնող յոյներին՝ իջնել Կ. Պօլսում։ Ափին երևացողներին կալանաւորում են և ամեն տեսակ նեղութիւններ պատճառում նրանց։

◆ Աւստրիական մամուլը նորից խօսում է կոմս Բերխտոլդի հրաժարականի մասին։ Յաջորդ համարվում է Պարիզում պաշտօնավարող դեսպան կոմս Զերնինը։

◆ Էկս-շահը, «День»-ի ասելով, յուսալով վերադարձնել գահը, առաջարկում էր Զէլիմ-խանին զինուորական մինիստրի պորտֆէյլը։ Հանգուցեալ աւազակապետը հրաժարվեց, պատասխանելով որ նա ընդունակ չէ ժողովրդի դէմ գնալ...

◆ Գերմանիայի, Աւստրո-Ունգարիայի, Իտալիայի, Բելգիայի և Դանիայի օրինակով՝ ռուսաց զօրքերի մէջ հանրամատչելի դասախօսութիւններ են լինելու գիւղատնտեսութեան մասին։

◆ Պետերբուրգում խօսում են ներքին գործերի մինիստր Մակլակօվի հրաժարականի մասին, որի յաջորդ համարվում է Ջունկօվսկին։

◆ Պետերբուրգում նորից խօսում են պրեմիէր Կոկօվցեվի հրաժարականի մասին։ Պնդում են, որ Կոկօվցեվը մեկնեց Պարիզ փոխառութիւն կնքելու համար, յետոյ մնալու է ֆինանսների մինիստր։ Պրեմիէրի պաշտօնում նշանակվելու է իբր Թէ Ռուխլօվը։

◆ Ժող. լուս. մինիստր Կասսօն մեկնում է Լիվադիայից Ռօստով՝ բժշկական ֆակուլտէտի տեղը դիտելու համար։

◆ Լիվադիայում Ռուխլօվից պահանջել են մանրամասն զեկուցում երկաթուղային վերջին խորտակումների պատճառների մասին։ Նախագծված է վերաքննել երկաթուղիների պաշտպանութեան կանոնները։

◆ Յայտնի բարեգործ Շախօվը Մոսկվայի համալսարանին յանձնեց 7000 ռուբլի՝ չունևոր ուսանողների ուսման վճարի համար։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

2 նոյեմբերի

ԼԻԲԱՎԱ։ Ծովային փոթորիկ է։

ՌԻԳԱ։ Ծովային փոթորիկ է,

ԲՈՒՇԻՐ։ Վախճանվեց Մասկատի սուլթան սէիդ-Ֆէյզ Ալիբէնդուրքին։

ՎԻԷՆՆ։ Առ. ժամը $5^1/_2$-ին զգացվեց ուժեղ երկրաշարժ։

ԼԻՎԵՐՊՈՒԼ։ Սէնտջէմի կայարանում գնացքների ընդհարման ժամանակ սպանվեցին 7, վիրաւորվեցին 25 մարդ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սինօդը որոշեց Թոյլ տալ արձան դնել Մուրոմցեվի գերեզմանի վրա՝ պայմանով միայն, որ արձանի վրա գրված լինի միմիայն «Սերգէյ Անդրէևիչ Մուրոմցև» ծննդեան ու մահվան Թւերով։

«Бирж. Вѣд.»-ի խմբագիր Ռօզանովը նահանգական դատարանից դատապարտվեց 1039-րդ յօդուածով 1 տարով բանտի Փօթիից ուղարկված Թղթակցութիւնը տպելուն համար, որի մէջ ասված էր, Թէ իբր տեղական արական գիմնազիայի տնօրէն Եագուլօվը ծեծում է աշակերտներին։ Միևնոյն յօդուածով դատապարտվեց 9 ամսով բանտի Ելցի ոստիկանապետ Շինմօվիչին զրպարտելու համար, 1038-րդ յօդուածով Ռօզանովը դատապարտվեց 3 շաբաթով բանտարկութեան Տիպէի սպանութեան գործի նախնական քննութիւնը տպագրելուն համար։

Ծովային մինիստրը մեկնեց Նիկօլայև։

Երկրագործութեան դեպարտամենտը նախագծել է 1914 Թ. նպաստ տալ մօտ 13 միլիօն ռուբլի զեմստվօներին, գիւղատնտեսական ընկերութիւններին և մասնաւոր անձանց գիւղատնտեսութեան ձեռնարկութիւնների համար։

ՆՕՎՕՉԵՐԿԱՍԿ։ Գաւառում ժանտախտը շարունակվում է։

ՊԱՐԻԶ։ Շքեղ հանդէսով բացվեց Ֆրանսիայում տուրիզմը զարգացնելու և ուսումնասիրելու գումարված կոնգրէսը, որ կազմակերպել է «Մատէն» Թերթը։

ՕԴԵՍՍԱ։ Երեան հանվեց խօլերայի 6-րդ դէպքը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչ՝ ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 Թւի ապրիլի 18-ից մինչև 1914 Թ. ապրիլի 17-ը (Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պօստատար գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստատար գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երեւան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12 ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երեւան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. ր.50 ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26,25- (II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնօվսկայա փող., № 18 (Վորոնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը՝ Սեմեօնօվսկայա, № 16.
(Հ.ու.կ.) 804. 100—6

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 Թ.
(Գուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն.
Բ. Գ. ԱՂԱՄԻՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ½ ժ. աչքի, ներքին և նեարդային հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻՁԷ—1—2 ժ. ներքին, երեխայոց հ. և ծաղկահատ։ Երեան, մէզի, խուխի հետազօտութիւն։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻՁԷ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—95

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ և վաճառվում է
Լ. ՇԱՆԹԻ
ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ
ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ
Գինն է 60 կ. ճանապարհածախսով 85 կ.։ Դիմել՝ Թիֆլիս, «Գիր» գրավաճառանոցին։
(Կ.) 835. 2 1

24 ՏԱՐԵԿԱՆ ՄԻ ՀԱՅ ԳՐԱԳԷՏ
ԵՐԻՏԱՍԱՐԴ
որոնում է որևէ յարմար պաշտօն։ Համաձայն է Թիֆլիսից դուրս էլ։ Դիմել Չերքէզովսկայա փող. № 3, բնակարան Եսայեաններին։ 833. 3—2

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐԻ
հետեւեալ հրատարակութիւնները.
1) «ԳԵՂՕՆԻ» պատկերազարդ հանդէսի 1906 Թ. համարը, յօգուտ կովկասահայ արկածեալների . 4 ր.
2) «ԳԵՂՕՆԻ» պատկերազարդ հանդէսի 1909 Թ. համարը, յօգուտ Ադանայի արհաւիրքներին ենթակայ հայերի . . . . . 4 ր.
3) «ՀԱՅԻ ԿՏՈՐ ՉԷՅԹՈՒՆՑՈՒՆ», յօգուտ Զէյթունի հայ սովեալների 2 ր.
«ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ», բժշկ. Գ.
4) Բաբեանի I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն . 1 ր.
II հատոր, Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բուժարան . . . 1 ր. 60 կ.
5) «ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ», Պ. Ադամեանի 1 ր.
6) «ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ», Քամալեանց Ս.-ի . 50 կ.
Յիշեալ գրքերը Թիֆլիսում մեզանից գնողները կարող են իրանց խնկական գներով ձեռք բերել։
Թիֆլիսից դուրս պահանջողների հաշւին է ճանապարհածախսը։
1. 10—10

АГЕНТЪ
М.А. ГАЖОНІЯ
по пріему объявленій
въ мѣстныя и иногородныя газеты.
Условія льготныя и выгодныя.
Исключительное представительство
нѣсколькихъ редакцій.
АДРЕСА: Тифлисъ:
I) Уг. Пушкинской и Армянск. базара, № 2, верхн. этажъ.
II) Гостин. «Ветцеля», телеф. 380.
III) Кв.: Вакэ, соб. д., телеф. 925.
826. 5—3

ԱԳԵՆՏ
ՅՈՎՀ. ԳՐԻԳՈՐԵԱՆ ԽԱԼԱԹԵԱՆԸ
Հիւանդութիւնից կազդուրվելուց յետոյ վերանորոգել է յայտարարութիւններ ընդունելու պատուէրները տեղական և օտար քաղաքների պարբերական հրատարակութիւններում տպագրել տալու համար։ Բարեխիղճ և ճշգրիտ կատարումն ստանձնված պարտաւորութիւնների։
Միխայլօվսկի պր. № 119. Տելէֆօն 697. (ա.օ.) 810. 5—4

Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերակցութիւնը
պատրաստել է այս տարի, որպէս օրինակ, փոքր քանակութեամբ
ՏՕՄԱՏ-ՊԻՒՐԷ
հմուտ մասնագէտի հսկողութեան ներքոյ, օրինակելի մաքրութեամբ, պահպանելով Թարմ տոմատի համը և հոտը։ Պատուէրներն ընդունվում են ընկերակցութեան վարչութեան գրասենեակում. Սօլօլակսկայա փողոց, № 9. Հեռախօս № 374.
(հ.ու.կ.) 816. 6—5

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկօլայեվսկայա, 36, Վորոնցովի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։
613. 50—44

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица. домъ казенный